ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գնաճի զարգացումներ 7

Գնաճի գործոններ 11
Արտաքին միջավայր 11
Տոկոսադրույքներ և փոխարժեք 14
Վճարային հաշվեկշիռ 18
Դրամավարկային զարգացումներ 21
Համախառն պահանջարկ և առաջարկ 26
Աշխատանքի շուկա 30
Ներմուծման և ներքին արտադրանքի գներ 30

Մակրոտնտեսական կանխատեսումներ 34
Արտաքին միջավայրի զարգացումներ 34
Ներքին տնտեսության զարգացումներ 35
Գնաճի կանխատեսումներ 35

ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրություններ 37

Բանկային համակարգի զարգացումներ 45

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ ... 51

Մակրոտնտեսական ցուցանիշները 2006 թ. հունվար - մարտին 57

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 70

Ներածություն

2006 թվականի դրամավարկային քաղաքականության իրականացումը սկսվեց երկու խոշոր կառուցվածքային բարեփոխումներով. առաջին՝ 2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկն ընդունեց գնաճի կառավարման նոր մոտեցում՝ անցում կատարելով գնաճի նպատակադրման ռազմավարությանը, երկրորդ՝ նոր ռազմավարության արդյունավետության բարձրացման նկատառումով փոփոխվեցին դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման մոտեցումները:

ԳՆԱՃԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև 2006 թվականը կիրառվող փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը ՀՀ ԿԲ-ն ընդունել էր 1994 թվականին, երբ 1993 թվականի վերջին ազգային արժույթը ներդնելուց հետո սկսել էր իրականացնել ինքնուրույն դրամավարկային քաղաքականություն: Փողի ագրեգատների ռազմավարության վերջնական նպատակը գնաճն էր, միջանկյալը՝ տնտեսությունում փողի առաջարկը կամ զանգվածը, որը ԿԲ-ն կառավարել է գործառնական նպատակի՝ փողի բազայի միջոցով: Այսինքն՝ գործել է փողի բազա-փողի զանգված-գնաճ շղթան: Չնայած ԿԲ-ն վերջին տարիներին հասել է գնաճի նպատակային ցուցանիշին, փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարություն իրականացնելիս առկա են եղել հիմնախնդիրներ: Մասնավորապես՝ վերջին տարիներին անկայունացել է փողի զանգված-գնաճ կապը, որի պատճառներն են՝ տնտեսությունում փողի պահանջարկի տատանողական վարքագիծը, բարձր դոլարայնացման պայմաններում փողի զանգվածում կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների զգալի ազդեցությունը՝ արտաքին շոկերը և այլն: Եվ քանի որ ԿԲ գլխավոր նպատակը գների կայունության ապահովումն է, վերոնշյալ կապի թուլացման պայմաններում ԿԲ-ն նախապատվությունը տալով գնաճի նպատակին՝ քաղաքականության իրականացման ժամանակ պարբերաբար վերանայել է իր կողմից ծրագրված փողի զանգվածի նպատակային ցուցանիշը: Փաստորեն, փողի ագրեգատների միջանկյալ նպատակն արդյունավետորեն չի ծառայել իր նշանակությանը: Այդ իսկ պատճառով, ԿԲ խորհուրդը նպատակահարմար է գտել փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության փոխարեն իրականացնել գնաճի նպատակադրման ռազմավարության, ընդ որում՝ 2006 թվականը նոր ռազմավարությանն անցման տարի է լինելու: Ըստ գնաճի նպատակադրման ռազմավարության՝ վերջնական նպատակը գնաճի նպատակային մակարդակն է, իսկ որպես անվանական խարիսխ հանդես է գալիս գնաճի կանխատեսված մակարդակը: Այս ռազմավարությունը իրականացնելիս ԿԲ-ն այլևս չի ուղղորդվում փողի ագրեգատների ցուցանիշով: Որպես գործառնական նպատակ է ընդունվում կարճաժամկետ տոկոսադրույքը, սակայն, ֆինանսական կայունության ապահովման նկատառումներից ելնելով, ԿԲ-ն կիրառելու է նաև ծավալային կարգավորման մոտեցումներ: ԿԲ-ն կանխատեսում է ապագա ժամանակահատվածի գնաճը, գնահատում նպատակային ցուցանիշից դրա շեղումը և քաղաքականությունը ուղղորդում նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղման վերացմանը: Գործում է տոկոսադրույք-գնաճի կանխատեսված մակարդակ-գնաճ շղթան: Նախկին ռազմավարության համեմատ գնաճի ուղղակի նպատակադրման հիմնական առավելությունն այն է, որ եթե առաջինի պարագայում գնաճը պայմանավորող գործոն էր համարվում միայն փողի զանգվածը, ապա երկրորդի դեպքում դիտարկվում է հավանական տարբեր ազդեցություններ ունեցող գործոնների լայն դաշտ՝ ներառյալ ապագայի վերաբերյալ հասարակության սպասումները:

Գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման պարագայում առավել կարևորվում է ԿԲ հաշվետվելիությունն ու թափանցիկությունը. ԿԲ-ն յուրաքանչյուր եռամսյակ հրապարակում է գնաճի հաշվետվություն, որը ներառում է նախորդ ժամանակահատվածի գնաճի վերլուծությունը, այն պայմանավորող գործոնները, ինչպես նաև հաջորդ ժամանակահատվածի գնաճի կանխատեսումները: Բացի այդ, յուրաքանչյուր ամսվա սկզբին ԿԲ խորհուրդը սահմանում է տվյալ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որի վերաբերյալ մամուլի հաղորդագրությունը հրապարակվում է նիստից անմիջապես հետո, իսկ այդ նիստի արձանագրությունը՝ տվյալ ամսվա առաջին տասնօրյակի ընթացքում: Բացի այդ, յուրաքանչյուր եռամսյակի սկզբին ԿԲ խորհուրդը որոշում է կայացնում առաջիկա եռամսյակի դրամավար-

կային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ՝ հիմնվելով գնաճի կանխատեսումների, տնտեսության առանձին հատվածների ռիսկերի վրա, որի վերաբերյալ ԿԲ խորհրդի կողմից հրապարակվում է մամուլի հաղորդագրություն: Առաջիկա տասն օրվա ընթացքում հրապարակվում է նաև այդ նիստի արձանագրությունը՝ ներառյալ գնաճի կանխատեսումները: Վերոնշյալ արձանագրությունները հրապարակվում են նաև ԿԲ ամսական տեղեկագրերում՝ որպես Դրամավարկային ամփոփագիր, և գնաճի եռամսյակային հաշվետվություններում (ԿԲ բանբեր)՝ որպես գնաճի կառավարմանն ուղղված քաղաքականության և գնաճի սպասումներն արտացոլող մեկնաբանություն:

Այդպիսով, հասարակությունը կարող է հետևել ԿԲ գործունեությանը, իրականացված քաղաքականության և հատկապես արձանագրված շեղումների վերաբերյալ ստանալ բացատրություններ: Այս գործընթացը կնպաստի ԿԲ նկատմամբ հասարակության վստահության և դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

ԿԲ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ՀՀ-ում գնաճի նպատակադրման ռազմավարության անցումային փուլը ենթադրում է այդ ռազմավարության փոխանցման լծակների, մասնավորապես՝ տոկոսադրույքի կիրառման ակտիվացում, կարճաժամկետ տոկոսադրույքի դերի բարձրացում: Այս նպատակով փոփոխվել են դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման մոտեցումները: Որպես հիմնական գործիք հանդես է գալիս ռեպո կամ որ նույնն է՝ վերաֆինանսավորման գործառնությունը, որի տոկոսադրույքը սահմանվում է յուրաքանչյուր ամսվա սկզբին՝ տվյալ ամսվա համար: Ռեպո գործառնություններն իրականացվում են յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը՝ 7-օրյա ժամկետով:

Միևնույն ժամանակ, բանկային համակարգում այսօր դեռևս առկա է մեծածավալ ավելցուկային իրացվելիության կրճատման խնդիր, որի լուծումից հետո միայն հնարավոր կլինի ԿԲ գործառնական նպատակի՝ ռեպո տոկոսադրույքի փոփոխության միջոցով ազդակներ հաղորդել ֆինանսական շուկային և ակտիվացնել տոկոսադրույքի փոխանցման լծակը: Այդ նպատակին են ծառայում ԿԲ սեփական արժեթղթերը, որոնք դիտարկվում են որպես կառուցվածքային գործիք, և յուրաքանչյուր ամսվա սկզբին հրապարակվում է թողարկումների ամսական գրաֆիկը՝ ժամկետայնությունը, օրերը և ծավալները:

Համեմատաբար ավելի երկարատև ժամանակահատվածում շուկայի մասնակիցներին իրացվելիություն տրամադրելու կամ ավելցուկային իրացվելիությունը կրճատելու նպատակով ԿԲ-ն երկրորդային շուկայում իրականացնում է պետական արժեթղթերի առք ու վաճառքի գործառնություններ:

Իրացվելիության և տոկոսադրույքների կարճաժամկետ տատանումների ճշգրտման համար կիրառվում են ճշգրտող գործիքներ:

Քանի որ կրճատվել է հիմնական գործիքի՝ ռեպո համաձայնագրի ժամկետը, կրճատվել են նաև մշտական հնարավորության գործիքների ժամկետները՝ դարձնելով դրանք մեկօրյա (օվերնայթ): Ընդ որում, մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները հավասարաչափ են հեռացված վերաֆինանսավորման տոկոսադրույքից:

Դրամավարկային գործիքների կիրառման մոտեցումների վերոնշյալ փոփոխություններն առաջին եռամսյակի ընթացքում դեռևս չեն արտացոլվել ԿԲ - առևտրային բանկեր փոխհարաբերություններում, քանի որ կատարվել են միայն մարտի վերջին: Դրանց ազդեցությունը ակնկալվում է երկրորդ եռամսյակից սկսած:

Ներկայացված ինստիտուցիոնալ միջավայրում էլ ԿԲ-ն 2006 թվականից ձեռնամուխ եղավ գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացմանը:

ԳՆԱՃՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ

2006թ. 1-ին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է 4.2[1]% գնաճ՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի 3.7% գնաճի և 2004թ. նույն ժամանակահատվածի 2.2 % գնաճի փոխարեն: Գնաճը մեծապես պայմանավորվել է սպառողական զամբյուղի 66.1%-ը կազմող պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.9% աճով, ինչը 3.9 տոկոսային կետով նպաստել է գնաճի եռամսյակային ցուցանիշի ձևավորմանը:

Գնաճը պայմանավորող հիմնական ապրանքախմբերը


Անվանում	Մարտը՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %
ՍԳԻ	**104.2**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**105.9**
ձկնամթերք	142.4
բանջարեղեն և կարտոֆիլ	137.2
միրգ	119.3
շաքարավազ	117.2
սուրճ, թեյ, կակաո	101.0
մսամթերք	100.8
կաթնամթերք	100.7
այլ մթերք	100.6
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.6**
ոսկերչական ապրանքներ	122.1
լվացող միջոցներ	102.9
հագուստեղեն, գործվածք	100.9
այգեգործական ապրանքներ	100.7
տեքստիլեղեն	100.7
Ծառայություններ, որից՝	**100.4**
կապ	108.7
հանգստի կազմակերպում	102.0
հանրային սնունդ	101.0

Նշենք, որ 2006թ. 1-ին եռամսյակում, ինչպես և 2005թ. 1-ին եռամսյակում, պարենային ապրանքների խմբում գնաճը պայմանավորող ապրանքախմբերի առաջատար եռյակը պահպանվել է: Միևնույն ժամանակ, եթե 2006թ. 1-ին եռամսյակում շաքարավազի, ոսկերչական ապրանքների և կապի ծառայությունների գները բարձրացել են՝ պայմանավորելով իրենց ապրանքախմբերի գնաճի հիմնական մասը, ապա նախորդ տարվա նույն եռամսյակում դրանք, ընդհակառակը, դրսևորել էին անկման միտումներ:

2006թ. մարտին, 2005թ. մարտի համեմատ, գնաճը կազմել է 0.3%, այդ թվում՝ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գները բարձրացել են համապատասխանաբար 2.6%-ով և 2.9%-ով, իսկ պարենային ապրանքների գները (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ընդհակառակը, նվազել են 0.8%-ով: 2005թ. մարտի համանման ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ -0.2%, -0.5% և 5.3%, իսկ գնաճի ցուցանիշը՝ 3.5%:

[1] ՀՀ ԱՎԾ-ը սույն թվականի ապրիլից ՍԳԻ-ի հաշվարկման մեթոդաբանությունում կատարել է փոփոխություններ, որոնց արդյունքում իրականացվել է գնաճի մակարդակների վերահաշվարկ. 1-ին եռամսյակի գնաճը կազմել է 2.8%: Մեթոդաբանության մեջ կատարված փոփոխությունները և դրանց արդյունքում վերանայված մակարդակները առավել մանրամասն կներկայացվեն 2006թ. 2-րդ եռամսյակի գնաճի հաշվետվությունում:

ՍԳԻ փոփոխությունները ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների (2005 թ. դեկտեմբերի նկատմամբ)




Դրամավարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից կարևորվում է գների բնականոն փոփոխությունների գնահատումը, ինչը էական ազդեցություն է թողնում դրամավարկային քաղաքականության իրականացման վրա՝ գնաճի ծրագրված տարեկան ցուցանիշի մակարդակի ապահովման առումով: 2004 թվականի հունիսից ՀՀ ԿԲ-ն որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ հրապարակում է 15 տոկոսով հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը[2]:

Գնաճը և բնականոն գնաճը մարտին

Տարի	Ցուցանիշ	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ
2004	Գնաճ	0.28	8.76	2.21	7.87
	Բնականոն գնաճ	0.03	6.24[3]	1.14	5.24
2005	Գնաճ	-0.90	3.50	3.70	4.40
	Բնականոն գնաճ	-0.26	0.71	0.14	0.87
2006	Գնաճ	0.40	0.30	4.20	0.90
	Բնականոն գնաճ	0.02	1.08	0.61	0.74

2006թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բնականոն գնաճը կազմել է 0.7%՝ հիմնականում պայմանավորված «Տավարի միս» (0.35%), «Օդային տրանսպորտ» (0.13%), «Խնձոր» (0.09 %) և «Սուրճ» (0.04%) ապրանքատեսակների գների աճով:

ՍԳԻ և բնականոն ՍԳԻ փոփոխությունները, % (նախորդ տարվա դեկտեմբեր = 100)



[2] *Ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր», 2004 թ. 1-ին եռամսյակ պարբերականում:*

[3] *Ցուցանիշը չի համընկնում նախորդ տարվա I եռ. «Բանբերում» բերված համանման ցուցանիշի հետ, քանի որ ՀՀ ԱՎԾ կողմից ճշգրտվել են ՍԳԻ կուտակային ցուցանիշները, որի հիման վրա էլ հաշվարկվում է բնականոն գնաճը:*

ԳՆԵՐԻ ԱՅԼ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2006 թվականի հունվար-մարտին արձանագրվել է ՀՆԱ դեֆլյատորի 99.0 % մակարդակ:


Արդյունաբերության ոլորտում 2006թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվել է գների 5.1% նվազում՝ հիմնականում պայմանավորված գունավոր մետալուրգիա ենթաճյուղում գների 17.3% նվազմամբ: Արդյունաբերության մյուս ճյուղերում, բացառությամբ սննդի արդյունաբերության, նկատվել է գների աճ, որը հատկապես բարձր է եղել ոսկերչական (16.4%), շինանյութերի արդյունաբերությունում (19.9%) և մեքենաշինությունում (13.4%):

Շինարարության ոլորտում գները 2006թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 7.2 %-ով:

Գյուղմթերքների իրացման գների 4.4 % աճը պայմանավորվել է հիմնականում բուսաբուծության իրացման գների 14.2 % աճով, ինչը պահածոյացնող ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին գյուղացիական տնտեսությունների կողմից իրացվող գյուղատնտեսական արտադրանքի գների աճի հետևանք է:

Բեռնափոխադրումների սակագների 2.1 % անկումը հիմնականում պայմանավորվել է խողովակաշարային (-6.6%) և երկաթուղային տրանսպորտով (-2.9%) բեռնափոխադրումների սակագների նվազմամբ: Ավտոմոբիլային և օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները բարձրացել են համապատասխանաբար 5.1 և 5.0%-ով:

ՀՆԱ դեֆլյատորը և գների ինդեքսները 2005 – 2006 թթ. հունվար-մարտին



Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2003 թվականի մարտից մինչև 2006 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը[2]:

Գրեթե բոլոր ապրանքախմբերի գների փոփոխությունների վրա տրենդի ազդեցությունը համեմատաբար փոքր է, ինչը նշանակում է, որ գների ամսական ինդեքսները տատանվել են որոշակի հաստատունի շուրջ: Աղյուսակից երևում է, որ 2003 հունվար-2005 դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ նվազել է ՍԳԻ-ի վրա տրենդի (0.1%) ու սեզոնայնության բաղադրատարրերի (82.6%) և աճել պատահական տարրի (17.3%) ազդեցությունը:

Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2003 թ. մարտ – 2006 թ. մարտ) (%)

	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ	0.1	82.6	17.3	100.0
1. Հացամթերք	13.6	26.4	60.0	100.0
2. Մսամթերք	4.9	60.0	35.1	100.0
3. Ձկնամթերք	0.0	50.6	49.4	100.0
4. Կաթնամթերք և յուղեր	1.0	54.0	45.0	100.0
5. Միրգ և բանջարեղեն	1.1	88.6	10.3	100.0
6. Այլ մթերք	0.1	78.6	21.3	100.0
7. Ոչ ոգելից խմիչք	0.3	34.4	65.3	100.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	1.9	26.1	72.1	100.0
9. Հագուստ և կոշկեղեն	4.3	40.8	54.9	100.0
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	0.1	25.1	74.8	100.0
11. Տնային գույք	19.1	16.7	64.2	100.0
12. Բուժսպասարկում և դեղորայք	0.0	17.4	82.6	100.0
13. Տրանսպորտ և կապ	0.1	27.7	72.2	100.0
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	10.4	27.7	61.9	100.0

Ըստ ապրանքախմբերի երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը փոփոխվել է տարբեր կերպ: Համեմատաբար խոշոր է եղել տրենդի ազդեցության փոփոխությունը, որը աճել է «Տնային գույք» (10.1 տոկոսային կետ), «Հագուստ և կոշկեղեն» (3.1 տոկոսային կետ) և նվազել «Բուժսպասարկում և դեղորայք» (-2.8 տոկոսային կետ) ապրանքախմբերում:

Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական գների ինդեքսների վարիացիայի գործակիցների օգնությամբ:

Գների ամսական ինդեքսների վարիացիայի գործակիցները 2005 և 2006 թթ. 1-ին եռամսյակում (%)


	2004 թ.	2005 թ.	2006 թ.
ՍԳԻ	1.59	3.55	1.88
1. Հացամթերք	0.64	0.25	0.28
2. Մսամթերք	1.12	3.49	1.11
3. Ձկնամթերք	35.94	12.17	6.74
3. Կաթնամթերք և յուղեր	0.54	0.82	0.26
4. Միրգ և բանջարեղեն	13.58	24.59	16.64
5. Այլ մթերքներ	1.16	1.15	0.09
6. Ոչ ոգելից խմիչք	0.45	0.80	0.12
7. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.08	0.10	0.12
8. Հագուստ և կոշիկ	0.09	0.45	0.15
9. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	0.73	1.18	0.13
10. Տնային գույք	0.02	0.04	0.79
11. Բուժսպասարկում և դեղորայք	0.05	0.04	0.47
12. Տրանսպորտ և կապ	0.42	3.06	0.61
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	0.21	0.04	0.10

Ըստ աղյուսակի տվյալների՝ գրեթե բոլոր ապրանքախմբերում 2005թ. նկատվել է տատանողականության աճ, այնուհետև՝ 2006թ.՝ նվազում: ՍԳԻ տատանողականությունը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների բարձր տատանողականությամբ, որոնցից առավել տատանողական վարքագիծ են դրսևորել «Ձկնամթերք», «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբերը:


Արտաքին միջավայր

2006 թվականի առաջին եռամսյակում շարունակվել են Եվրոգոտու համեմատ ԱՄՆ տնտեսության բարձր աճի դրսևորումները: ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքը մնացել է կայուն, թեև տարեկան կտրվածքով ԱՄՆ դոլարը արժևորվել է 9.6 տոկոսով, սակայն առաջին եռամսյակի վերջից արդեն դրսևորվել են հակառակ միտումներ: Նավթի միջազգային գները կայուն մնալով՝ առաջին եռամսյակի ընթացքում նվազեցրել են տարեկան աճի տեմպերը, սակայն նույնպես էապես բարձրացել են երկրորդ եռամսյակի սկզբին՝ հասնելով 75 ԱՄՆ դոլարի՝ բարելի դիմաց:


Նավթի գները շարունակում են պահպանել բարձր աճի տեմպերը




2005 թվականին գրանցված ԱՄՆ դոլարի ուժեղացման միտումը 2006 թվականից դրսևորվեց հակառակ ուղղությամբ



ԱՄՆ տնտեսական աճի և գնաճի մակարդակները բարձր են



Եվրոգոտու տնտեսական աճը մնում է ցածր, իսկ գնաճը՝ բարձր



ԱՄՆ տնտեսությունում 2005 թվականի չորրորդ եռամսյակում դրսևորված ցածր աճի տեմպերը (1.7 տոկոս՝ տարեկան կտրվածքով) 2006 թվականի առաջին եռամսյակում վերականգնվել են՝ կազմելով 5.3 տոկոս: Դա ցույց է տալիս, որ ԱՄՆ տնտեսությունն ունի բավականին ուժեղ հիմնարար ցուցանիշներ՝ գործազրկության ցածր մակարդակ և արտադրողականության աճի բարձր տեմպեր, որոնք նպաստում են պետբյուջեի պակասուրդի հաղթահարմանը: ԱՄՆ տնտեսության հիմնական շարժիչ ուժը շարունակում է մնալ մասնավոր սպառումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 5.2 տոկոսով՝ ունենալով 3.6 տոկոսային կետ ազդեցություն ՀՆԱ-ի վրա:

Դեռևս էական խոչընդոտ է ԱՄՆ առևտրային պակասուրդը, որն առաջին եռամսյակում պահպանել է նախորդ տարվա չորրորդ եռամսյակում գրանցված ռեկորդային ցուցանիշը (6.7 տոկոս՝ ՀՆԱ-ում): 2006 թվականի առաջին եռամսյակում պետբյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 2.8 տոկոս՝ նախորդ եռամսյակի 3.6 տոկոսի փոխարեն:

Գործազրկության մակարդակը դեռևս մնում է ցածր՝ 4.7 տոկոս. պահպանվել է նախորդ եռամսյակի ցուցանիշը: 2006 թվականի առաջին եռամսյակի նախնական տվյալներով աշխատանքի արտադրողականության սեզոնայնորեն հարթեցված աճը կազմել է 3.8 տոկոս՝ տարեկան կտրվածքով, ինչը բավականին բարձր էր վերլուծաբանների սպասումներից: Սպառողական գների ինդեքսի տարեկան աճը 2006 թվականի մարտին, ինչպես և նախորդ տարվա դեկտեմբերին, կազմել է 3.4 տոկոս: Ֆեդերալ պահուստային համակարգը առաջին եռամսյակում շարունակել է իր «քայլ առ քայլ զսպող քաղաքականությունը»՝ իր ամեն նիստից հետո ավելացնելով նպատակային տոկոսադրույքները 0.25 բազիսային կետով և հասցնելով 4.75 տոկոսի:

Եվրոգոտու տնտեսության աճը դեռևս էապես ցածր է ԱՄՆ տնտեսության համապատասխան ցուցանիշից (2006 թվականի առաջին եռամսյակում 2.6 տոկոս՝ տարեկան կտրվածքով): Տնտեսական աճը հիմնականում պայմանավորվել է ներդրումների աճով՝ 5.4-ական տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ցածր տնտեսական աճի տեմպերը մեծ մասամբ գործազրկության բարձր մակարդակի հետևանք են, որը 2005 թվականի երկրորդ կիսամյակից չնայած սկսել է նվազել, այնուամենայնիվ մնում է բավականին բարձր մակարդակի վրա՝ 8.1 տոկոս՝ 2006 թվականի մարտի դրությամբ:

Չնայած Եվրոգոտու ընթացիկ հաշիվը թվում է հաշվեկշռված, սակայն նկատելի են վատթարացման որոշակի միտումներ: 2006 թվականի հունվար-փետրվարին առևտրային հաշվեկշիռը ունեցել է բացասական մնացորդ, մինչդեռ նախորդ մի քանի տարիներին մշտապես եղել է դրական: Սպառողական գների ինդեքսի տասներկուամսյա աճը դեռևս Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած առավելագույն մակարդակից բարձր է՝ 2006 թվականի մարտի դրությամբ՝ 2.2 տոկոս, որը, նվազող գործազրկության հետ մեկտեղ, ստիպեց ԵԿԲ-ին ձեռնարկել տոկոսադրույքների աստիճանական բարձրացման քայլեր: Արդյունքում՝ 2005 թվականի դեկտեմբերից տոկոսադրույքները 0.25 բազիսային կետով երկու անգամ բարձրացնելուց հետո Եվրոբանկի նպատակային տոկոսադրույքը կազմեց 2.5 տոկոս, որը դեռևս ցածր է գնահատվում «չեզոք տոկոսադրույքից»[4]:

[4] *«Չեզոք» է համարվում այն տոկոսադրույքը, որը ո՛չ զսպում է տնտեսական աճը, ո՛չ էլ խթանում:*

Ռուսաստանի տնտեսական աճի շարժիչ ուժը ներքին պահանջարկի շարունակական աճն է[5]: Սակայն էապես փոխվել է ՀՆԱ կառուցվածքը: Վերջինս արտացոլվել է վերամշակող և արտահանելի ճյուղերում աճի տեմպերի դանդաղմամբ, ինչը մասամբ բացատրվում է ռուսական ռուբլու արժևորման ճնշումներով: Եթե նախորդ տարիներին տնտեսության շարժիչ ուժը նավթային արդյունաբերության և մի շարք այլ արդյունաբերության ճյուղերն էին, ապա այժմ արտադրությունը տեղափոխվել է ոչ արտահանելի ապրանքների և ծառայությունների ճյուղեր: Արդյունաբերության աճի տեմպերը շարունակում են ցածր մնալ, և 2006թ. առաջին եռամսյակում վերջինիս աճը կազմել է 3.0%: Ըստ գնահատումների՝ 2005թ. միտումները կշարունակվեն նաև 2006թ., ինչի արդյունքում ոչ արտահանելի ճյուղում կգրանցվեն առաջանցիկ աճի տեմպեր:

Նավթի գների անընդհատ աճը հանգեցրել է 2006թ. առաջին եռամսյակում ընթացիկ հաշվի 28.0 մլրդ ԱՄՆ դոլար ավելցուկի (ըստ նախնական տվյալների), իսկ համախառն պահուստները մարտի վերջի դրությամբ կազմել են 205.9 մլրդ ԱՄՆ դոլար:

Նավթի գների և նավթային եկամուտների աճը, չնայած երկրի ֆինանսական վիճակի ամրապնդմանը, այնուամենայնիվ բարդացնում է տնտեսական քաղաքականության իրագործումը: Մասնավորապես՝ արտարժութային միջոցների զգալի ներհոսքը շարունակում է ճնշումներ գործադրել գնաճի և իրական փոխարժեքի վրա: 2006թ. սպառողական գների տարեկան աճը առաջին եռամսյակում կազմել է 10.9%, իսկ ռուբլու իրական արժևորումը՝ 5.9%:

Կովկասյան տարածաշրջանի երկրներում պահպանվում են տնտեսական աճի բարձր տեմպերը, սակայն դեռևս առկա է բարձր գնաճի զսպման հիմնախնդիրը (բացառությամբ Հայաստանի):

Ադրբեջանի տնտեսության աճի տեմպերն ամենաբարձրն են ինչպես տարածաշրջանի, այնպես էլ ԱՊՀ երկրների համեմատ: 2006թ. առաջին եռամսյակում ՀՆԱ աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 39.5%: Ինչպես 2004-2005թթ., այնպես էլ 2006թ. առաջին եռամսյակում տնտեսական աճի այսպիսի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորվել են վառելիքի (նավթ, բնական գազ և այլ ածխաջրեր) արդյունահանմամբ և դրա հետ կապված՝ շինարարության և տրանսպորտի հատվածների աճով: Այսպես, արդյունաբերական արտադրանքի աճը կազմել է 47.4%, շինարարության աճը՝ 20.1%, իսկ ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը կազմել է 10.3%:

2006թ. առաջին եռամսյակում Ադրբեջանում տարեկան գնաճը կազմել է 5.5%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 4.6%: Ընդ որում, գնաճին հիմնականում նպաստել է պարենային ապրանքների գների աճը, որը համապատասխանաբար կազմել է՝ 6.3% և 6.4%: Առայժմ Ադրբեջանի դրամավարկային մարմինների համար կարևոր խնդիր է մնում բարձր գնաճի տեմպերի զսպումը, որը իրականացնելու նպատակով թույլ է տրվում մանաթի աստիճանական արժեքավորում: Մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2006թ. առաջին եռամսյակում, տարեսկզբի համեմատ, արժևորվել է 0.69%-ով, իսկ մանաթի տարեկան արժևորումը կազմել է 6.54%:

Վրաստանում տնտեսական աճի ցուցանիշը տարածաշրջանում ամենացածրն է, սակայն բարձրերից մեկն է ԱՊՀ և զարգացող երկրների շրջանակում[6]: Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպը 2006թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կազմել է 7.1%: Արտադրության աճի տեմպը հիմնականում պայմանավորվել է վերամշակող արդյունաբերության՝ 12.6%, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի բաշխման՝ 5.3% աճով: Ընդ որում, վերամշակող արդյունաբերության ճյուղում ավելի քան 10.6 անգամ ավելացել է շաքարի արտադրությունը:

2006թ. առաջին եռամսյակում, ինչպես Ադրբեջանում, Վրաստանում նույնպես շարունակվել է գրանցվել բարձր գնաճ: 2006թ. առաջին եռամսյակում տարեկան գնաճը Վրաստանում կազմել է 5.1%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 1.5%: Գնաճի վարքագծի վրա հիմնական ազդեցություն են ունեցել պարենային ապրանքների գները, որոնց աճը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 2.2%: 2006թ. հունվար-մարտին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, վրացական լարին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.92%-ով, իսկ առաջին եռամսյակում լարիի փոխարժեքի տարեկան արժևորումը կազմել է 0.68%:

---

[5] Ըստ Ռուսաստանի վիճակագրության գնահատումների՝ 2005թ. տնտեսական աճը կազմել է 6.4%՝ նախորդ տարվա 7.2%-ի փոխարեն: Տնտեսական աճի գրեթե 40%-ն ապահովվել է առևտրի ճյուղի հաշվին, շինարարության ճյուղում նույնպես գրանցվել են բարձր աճի տեմպեր:

[6] Վրաստանում ՀՆԱ ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակահատվածից հետո 83 օրվա ընթացքում: Այսինքն՝ 2006թ. առաջին եռամսյակի տնտեսական աճի պաշտոնական ցուցանիշները կպարզվեն հունիսի երկրորդ տասնօրյակում: Նշենք նաև, որ 2005թ. տնտեսական աճի տարեկան ցուցանիշը Վրաստանում կազմել է 9.3%:

Տոկոսադրույքներ և փոխարժեք

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ


2006 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության արդյունքների վրա ազդեցություն են ունեցել «Ներածության» մեջ նկարագրված ինստիտուցիոնալ միջավայրը, ինչպես նաև 2005 թվականից ՀՀ տնտեսությունում արձանագրված արագ ապադոլարայնացումը:

Գնաճի նպատակադրման ռազմավարություն իրականացնելիս որպես գործառնական նպատակ, ինչպես նշվեց, ընդունվում է կարճաժամկետ տոկոսադրույքը, այսինքն՝ ԿԲ-ն փոփոխելով վերաֆինանսավորման կամ ռեպո տոկոսադրույքը, ներգործում է միջբանկային շուկայի տոկոսադրույքների մակարդակի վրա, որի փոփոխությունները դրամավարկային քաղաքականության փոխանցման լծակների միջոցով ազդում են համախառն պահանջարկի, հետևաբար նաև գնաճի մակարդակի վրա: Փաստորեն, ԿԲ-ն հայտարարում է միայն տոկոսադրույք և դրանով ազդակներ է փոխանցում ֆինանսական շուկային: Ֆինանսական շուկայի մասնակիցները ԿԲ դրամավարկային քաղաքականության ուղղությունների մասին տեղեկատվություն ստանում են տոկոսադրույքի միջոցով: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվում է՝ ելնելով նրանից, թե որ ուղղությամբ և որքանով է շեղվում տարեկան գնաճի նպատակային ցուցանիշը կանխատեսվածից:

Տնտեսության ապադոլարայնացումը բացատրվում է հիմնականում դրամի արժեքավորման և դրա կայունացման պայմաններում դրամի նկատմամբ պահանջարկի աճով: Քանի որ տնտեսությունում տեղի էր ունենում արժույթի փոխարինում հօգուտ ազգային արժույթի, ԿԲ-ն բավարարել է այդ պահանջարկը, որի արդյունքում էապես աճել են դրամային ագրեգատները: Սա մի կողմից չեզոքացրել է 2005 թվականի ավելի մեծ գնանկման դրսևորումները (գյուղատնտեսական և ներմուծված ապրանքների գների նվազմամբ պայմանավորված), մյուս կողմից կուտակել է գնաճային ներուժ, որը ռիսկային է համարվում 2006 թվականի համար:

Նշված ինստիտուցիոնալ միջավայրը, ապադոլարայնացումը, նաև տնտեսության այլ հատվածների ռիսկերը (որոնց ազդեցությունը գնաճի վրա ներկայացվում է համապատասխան բաժիններում) հաշվի առնելով՝ ԿԲ-ում նախ կանխատեսվել էին տնտեսության իրական, արտաքին հատվածների ցուցանիշները, այնուհետև՝ փողի պահանջարկը, որոնք էլ հիմք էին հանդիսացել գնաճի ցուցանիշի կանխատեսման համար: Ըստ վերջինիս արդյունքների՝ 2006 թվականի դեկտեմբերին 12-ամսյա գնաճը գերազանցելու է նպատակային առավելագույնը 3% մակարդակը: Եվ, գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո, ԿԲ-ն պետք է քաղաքականությունն ուղղեր կանխատեսված և նպատակային ցուցանիշների միջև շեղման վերացմանը: Այս նկատառումով ԿԲ խորհուրդը հունվարին բարձրացրել է ռեպո տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով: Գնաճի նպատակային ցուցանիշի գերազանցման ռիսկերը շարունակվել են նաև եռամսյակի հաջորդ ամիսներին, սակայն ԿԲ խորհուրդը տոկոսադրույքը չի բարձրացրել, այլ նախապատվությունը տվել է ֆինանսական շուկայում ավելի ակտիվ գործառնությունների իրականացման միջոցով տոկոսադրույքի փոխանցման լծակի արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝ ԿԲ հիմնական գործիքի՝ ռեպո գործառնության տոկոսադրույքը հունվարի վերջին 3.5–ից բարձրացվել է 4%-ի և եռամսյակի ընթացքում թողնվել է անփոփոխ, լոմբարդային վարկի տոկոսադրույքը իջեցվել է 16-ից 12%-ի, իսկ ավանդինը մնացել է անփոփոխ՝ 1%:


Միջբանկային ռեպո տոկոսադրույքը կայունացել է ԿԲ ռեպո տոկոսադրույքի բարձրացումից հետո



Առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգում առկա իրացվելիության բարձր մակարդակի պայմաններում նման քաղաքականության ազդեցությունը ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վրա բնականաբար չէր կարող նշանակալից լինել, և հիմնական ազդակներն ակնկալվում էին հաջորդող եռամսյակներում: Այս պարագայում առաջին եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործառնությունների միջին տարեկան տոկոսադրույքը կայունացել է 3.5%-ի շուրջը:

Եռամսյակի ընթացքում ԿԲ-ն սեփական արժեթղթերի տեղաբաշխման և հակադարձ ռեպո գործարքների միջոցով իրականացրել է ակտիվ ներքաշող գործառնություններ՝ նպատակ ունենալով կրճատել բանկային համակարգի ավելցուկային իրացվելիությունը: Մասնավորապես՝ տեղաբաշխվել է 8.6 մլրդ դրամի պարտատոմս և իրականացվել 2.7 մլրդ դրամի հակադարձ ռեպո գործառնություն: Առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ներդրված ավանդի ծավալը կազմել է 20,4 մլրդ դրամ:

Ավելցուկ պաշարների վարքագիծը



Պետական պարտատոմսերի շուկայում 2006թ. առաջին եռամսյակի ընթացքում նկատվել է տոկոսադրույքների աճ: 2006թ. մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պետական կարճաժամկետ պարտատոմսերի[7] միջին եկամտաբերությունը երկրորդային շուկայում աճել է 1.1 տոկոսային կետով՝ կազմելով 4.8%, իսկ առաջնային շուկայում տոկոսադրույքների աճը կազմել է 0.9 տոկոսային կետ, միջին եկամտաբերությունը՝ 4.64:


Միջնաժամկետ հատվածում պետական պարտատոմսերի եկամտաբերությունները, մասնավորապես՝ մինչև 2 տարի ժամկետայնությամբ արժեթղթերի տոկոսադրույքները առաջնային շուկայում աճել են 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 4.8%, իսկ երկրորդային շուկայում՝ 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 4.7%: Երկարաժամկետ հատվածում տոկոսադրույքները, պետական երկարաժամկետ պարտատոմսերի ժամկետայնության երկարացմամբ, մասնավորապես՝ 2006թ. մարտին 15 տարի շրջանառության ժամկետով պարտատոմսերի թողարկմամբ պայմանավորված, աճել են մոտ 2 տոկոսային կետով և կազմել 8.5%:

Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորի ուսումնասիրությունը, եկամտաբերությունները ՊՊ երկրորդային շուկայում աճել են կորի գրեթե ողջ երկայնքով: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 94.5%-ը, պայմանավորվել է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է 0.36 տոկոսային կետ՝ ի հաշիվ եկամտաբերությունների աճի: 26.6%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.053-ից 0.067), ինչը խոսում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության աճի մասին: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են –21.1%:

Ինչպես 2005 թվականին, այնպես էլ 2006 թ. առաջին եռամսյակում, ֆինանսական շուկայում դրամայնացման մակարդակի բարձրացմանը զուգընթաց, արձանագրվել է տոկոսադրույքների որոշակի անկում:


[7] *Ներառված են նաև ԿԲ պարտատոմսերը:*

Տոկոսադրույքների աճ եկամտաբերության կորի ամբողջ երկայնքով




Այսպես, 2006 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի կողմից ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները, 2005թ. մարտի համեմատ, աճել են 0.77 տոկոսային կետով և կազմել 5.17%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները, նվազելով 1.37 տոկոսային կետով, կազմել են 3.63%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 1.54 տոկոսային կետ (նախորդ տարի՝ 0.6):

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը գրեթե չի փոփոխվել



Առևտրային բանկերի կողմից ԱՄՆ դոլարով և դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները նույնպես դրսևորել են անկման միտումներ: Այսպես, ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները 2006թ. մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 3.69 և 2.95 տոկոսային կետերով՝ համապատասխանաբար կազմելով 16.51% և 17.85%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 1.34 տոկոսային կետ, իսկ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունները՝ համապատասխանաբար 14.22 և 11.34 տոկոսային կետ:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքների տարբերությունը գրեթե վերացել է




ՓՈԽԱՐԺԵՔ

Անվանական փոխարժեքը՝ որպես փոխանցման կարևոր ուղի, անխուսափելիորեն իր ազդեցությունն է ունենում գների վարքագծի վրա՝ մի կողմից ներմուծվող ապրանքների գների, մյուս կողմից՝ սպասումների ձևավորման միջոցով: Անվանական փոխարժեքն ազդում է նաև տրանսֆերտների դրամային մեծության, հետևաբար նաև՝ պահանջարկի վրա:

ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ի տարբերություն նախորդ երկու տարիների, 2006 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ունեցել է համեմատաբար կայուն վարքագիծ: Սակայն նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 5.8%-ով՝ նախորդ տարվա 18.5%-ի փոխարեն, ինչն էլ գների աճի վրա զսպողական ազդեցություն է ունեցել:


ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը եռամսյակի ընթացքում գրեթե կայուն է եղել, սակայն արժևորվել է 2005 թ. I եռ. նկատմամբ



2006թ. առաջին եռամսյակում փոխարժեքի նման վարքագծի, այն է՝ տարեկան արժևորման տեմպերի դանդաղման վրա էական ազդեցություն է ունեցել ընթացիկ հաշվի պակասուրդի խորացումը և կապիտալի ու ֆինանսական հաշվով ներհոսքի տեմպերի դանդաղումը: Ելնելով վճարային հաշվեկշռի ձևավորված միտումներից և դրամավարկային քաղաքականության նպատակներից՝ Կենտրոնական բանկը արտարժութային շուկայում հանդես է եկել որպես արտարժույթ վաճառող. առաջին եռամսյակի ընթացքում արտարժույթի վաճառքի ծավալը կազմել է 7.3 մլն ԱՄՆ դոլար:

Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 391.76 և 368.75 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ աճել են 33.84%-ով և 34.70%-ով), իսկ համախառն ծավալը կազմել է 760.51 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ աճել է 34.3%-ով):

Միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները




Եվրո/դրամ գործառնությունների շուկայում նույնպես տեղի է ունեցել ծավալների աճ՝ 40.8%-ով: Համախառն ծավալը կազմել է 65.34 մլն եվրո՝ նախորդ տարվա առաջին եռամսյակում գրանցված 46.40 մլն եվրոյի փոխարեն:

Դանդաղել է նաև անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորումը: ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի տարեկան արժևորումը 2006թ. առաջին եռամսյակում կազմել է 10.3%, որից

5.8 տոկոսային կետը պայմանավորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորմամբ, իսկ 4.3 տոկոսային կետը՝ գործընկեր երկրների փոխարժեքների կշռված միջինի արժեզրկմամբ: Վերջինիս էապես նպաստել է առաջին եռամսյակում եվրոյի տարեկան արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 2.9 տոկոսային կետով:

Ի տարբերություն անվանական արդյունավետ փոխարժեքի, իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումն ավելի թույլ էր: 2006թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական արդյունավետ փոխարժեքն[8] արժևորվել է 2.1%-ով, իսկ մարտին, նախորդ տարվա մարտի նկատմամբ, արժևորումը կազմել է 1.2%: Ընդ որում, իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը պայմանավորվել է անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով, իսկ դրա ցածր տեմպը՝ գործընկեր երկրների բարձր միջին կշռված գնաճով՝ 5.6%: Վերջինիս էապես նպաստել է Ռուսաստանի բարձր գնաճը, որի ազդեցությունը կազմել է 2.1 տոկոսային կետ:

Իրական արդյունավետ և անվանական արդյունավետ փոխարժեքների արժևորման տեմպերը դանդաղել են 2006 թ. I եռամսյակում



Վճարային հաշվեկշիռ[9]

2006թ. առաջին եռամսյակում արտաքին միջավայրը բնութագրվել է հետևյալ միտումներով. մետաղների միջազգային գների աճի տեմպերի, նավթի միջազգային գների՝ նախորդ տարվանից շարունակվող բարձր մակարդակի պահպանում, ինչպես նաև տրանսֆերտների շարունակվող աճ: Նշված արտաքին միջավայրում արտահանման ծավալները նախորդ եռամսյակի համեմատ նվազել են, ի տարբերություն ակնկալվող փոքր-ինչ աճի, ներմուծման ծավալները՝ աճել: Արտարժութային շուկայում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, ինչպես և ակնկալվում էր, գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժևորում:

2006թ. առաջին եռամսյակում գնաճի վրա արտաքին աշխարհի ազդեցությունը երկակի է եղել, այսինքն՝ որոշ գործոններ նպաստել են գնաճին, իսկ որոշ գործոններ էլ զսպել են: Ներմուծման գների աճը, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, չնայած անվանական փոխարժեքի արժևորմանը, ունեցել է ընդլայնողական ազդեցություն[10]: Մյուս կողմից, ներքին տնտեսությունում եկամուտների աճը,

[8] *Հաշվարկված է 10 առևտրային գործընկեր երկրների (առանց Բելգիայի) 1999-2003թթ. կշիռներով՝ միջին երկրաչափականի մեթոդով (տես 2005թ. Դրամավարկային քաղաքականության ծրագրում):*
[9] *2006թ. առաջին եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:*
[10] *Ավելի մանրամասն տե՛ս «Ներմուծման գները» բաժնում:*

ինչպես նաև ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացումը, հանգեցրել են ներմուծման ծավալների բարձր աճի, ինչը, արտահանման նվազման հետ մեկտեղ, ընթացիկ հաշվի պակասուրդի նշանակալի խորացման պատճառ է դարձել: Այս պարագայում տնօրինվող եկամուտների ավելի մեծ մասն ուղղվել է արտաքին աշխարհի ապրանքների և ծառայությունների սպառմանը՝ հետևաբար դուրս է հոսել տնտեսությունից, ինչն էլ զսպել է գների աճը:

2006թ. առաջին եռամսյակում պահպանվել է արտահանման գների աճի՝ նախորդ տարի դրսևորված միտումը՝ հիմնականում պայմանավորված միջազգային շուկայում հումքային ապրանքների, ինչպես նաև գործընկեր երկրներում սպառողական ապրանքների գների աճով: Այնուամենայնիվ, արտահանման գների նման աճը իրական արտահանման ծավալների աճի չի հանգեցրել, ինչը հնարավոր է արտադրողականության աճի հաշվին[11]: Իրական արտահանման ծավալների աճը, որպես արտադրողականության աճի արդյունք, այլ հավասար պայմաններում պետք է նպաստի արտահանելի ճյուղում, հետևաբար նաև ամբողջ տնտեսությունում աշխատավարձի աճին: Իսկ իրական արտահանման ծավալները (ներառյալ ծառայությունները), նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, զգալի՝ 10.7%-ով նվազել են: Հետևաբար, կարելի է փաստել, որ զսպվել է արտահանելի ճյուղում աշխատավարձերի աճը[12]՝ գնաճի վրա ունենալով զսպող ազդեցություն (առաջարկի տեսանկյունից):

Ընթացիկ հաշիվ. Ի տարբերություն ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի՝ նախորդ տարիներին դրսևորած բարելավման վարքագծի, 2006թ-ից այն նորից սկսեց վատանալ: 2006թ. առաջին եռամսյակի վերջին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 59.6 մլն ԱՄՆ դոլարով (մոտ 2 անգամ) և կազմել 120.3 մլն ԱՄՆ դոլար[13], իսկ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում կազմել է 20.4% (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 11.7%): Ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը, չնայած մասնավոր տրանսֆերտների և եկամուտների աճին, էապես նպաստել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի նշանակալի աճը:

2006թ. առաջին եռամսյակում առևտրային հաշվեկշռի պակասուրդը տարեկան կտրվածքով ավելացել է 58.8 մլն ԱՄՆ դոլարով (44.6%-ով) և կազմել 190.6 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման ծավալները նվազել են 5.6%-ով (արտահանումը կազմել է 188.2 մլն ԱՄՆ դոլար), ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված աճի բարձր ցուցանիշի՝ 32.2%: Արտահանման նվազման պատճառը մեծ կշիռ կազմող ապրանքախմբերի ծավալների նվազումն էր, բացառությամբ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի (վերջինիս ծավալների աճը կազմել է 69.0%): Ներմուծման ծավալներն ավելացել են 14.4%-ով (ներմուծումը կազմել է 378.8 մլն ԱՄՆ դոլար), չնայած աճի տեմպերը դանդաղել են՝ նախորդ տարվա նույն եռամսյակում գրանցված 31.2%-ի համեմատ: Ներմուծման և արտահանման ցուցանիշների վրա նշանակալի ազդեցություն է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ապրանքների ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների նվազումը (համապատասխանաբար՝ 24.8% և 28.6%): Վերջինս ադամանդագործական ձեռնարկության արտադրության ծավալների նվազման հետևանք է: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները ավելացել են[14]: 2006թ. առաջին եռամսյակում ներմուծման տարեկան իրական աճը (ներառյալ ծառայությունները) կազմել է 2.7%՝ նախորդ տարվա 21.3%-ի փոխարեն:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու (ինչն ավելի ակնառու կդարձնի գնաճի վրա դրա ազդեցությունը), արտահանման և ներմուծման ծավալների աճը կազմել է համապատասխանաբար 6.7% և 31.1%: Արդյունքում՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, առանց նշված հոդվածի, ավելացել է 63.8 մլն ԱՄՆ դոլարով (58%-ով) և կազմել 173.8 մլն ԱՄՆ դոլար:

Արտաքին առևտրի ապրանքային հաշվեկշռի պակասուրդի խորացումը պայմանավորվել է ԱՊՀ, Եվրոմիության, Իսրայելի, Թուրքիայի և Չինաստանի հետ ապրանքային հաշվեկշռի պակասուրդների՝ համապատասխանաբար 37.2%, 7.6%,71.5%, 40.6% և 93.8% խորացմամբ[15]:

---

[11] Այն հանգամանքը, որ ՀՀ-ում սպառման մեջ արտահանվող ապրանքների տեսակարար կշիռը բավականին փոքր է, թույլ է տալիս ենթադրել, որ արտահանման ծավալների աճը պետք է տեղի ունենա միայն արտադրողականության աճի հաշվին և ոչ թե ներքին շուկայից արտաքին շուկա առաքման հաշվին:


[12] Արդյունաբերության ճյուղում (որը հիմնականում արտահանելի ճյուղն է) աշխատավարձերի աճը 2006թ. հունվար- փետրվարին կազմել է 12.2%՝ հետ մնալով տնտեսության ընդհանուր աշխատավարձի աճի 17.3% միջին տեմպից (մանրամասն տե՛ս «Աշխատուժի շուկա» բաժնում):

[13] 2004-2005թթ. ընթացքում ընթացիկ հաշվի պակասուրդի առավելագույն ցուցանիշը գրանցվել է առաջին եռամսյակում:


[14] Նվազել են նաև երեք ապրանքախմբերի ներմուծման ծավալները, որոնց տեսակարար կշիռը փոքր է ընդհանուր ներմուծման մեջ:

[15] Առևտրաշրջանառության մեջ աշխարհագրական խոշոր փոփոխությունները կապված են նաև վիճակագրական գրանցման՝ «ըստ ծագման վայրի» սկզբունքի ներդրման հետ՝ նախկինում գործող «ըստ առևտուր անող երկրի» սկզբունքի փոխարեն:

2006 թ. I եռամսյակում արտահանման հիմնական 3 ապրանքախմբերի ծավալները նվազել են



2006 թ. I եռամսյակում ներմուծման գրեթե բոլոր հոդվածների ցուցանիշների աճ է արձանագրվել



2006թ. առաջին եռամսյակում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը խորացել է 10.6%-ով (կազմել է 12.9 մլն ԱՄՆ դոլար), ինչը նպաստել է ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացմանը:

Հակառակ վերը նշվածի, մասնավոր տրանսֆերտները և գործոնային եկամուտները նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի նվազմանը, իսկ վերջիններիս տարեկան աճը կազմել է համապատասխանաբար՝ 22.0% և 16.9%[16]: Պաշտոնական տրանսֆերտները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել են 58.8%-ով:

Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացումը գնաճի վրա ունեցել է զսպող ազդեցություն, քանի որ հանգեցրել է մի կողմից՝ եկամուտների արտահոսքի ավելացման, մյուս կողմից՝ ներմուծման միջոցով ապրանքների և ծառայությունների լրացուցիչ առաջարկի ավելացման:

[16] *2006թ. առաջին եռամսյակում մասնավոր տրանսֆերտների և աշխատուժից եկամուտների (գործոնային եկամուտների մի մասի) տարեկան աճը կազմել է 25.3%:*


մլն ԱՄՆ դոլար

	I եռ. 03	I եռ. 04	I եռ. 05	I եռ. 06
Ընթացիկ հաշիվ	-57.3	-75.6	-60.7	-120.3
Առևտրային հաշվեկշիռ	-86.0	-101.6	-131.8	-190.6
Ծառայություններ (զուտ)	-12.8	-17.8	-11.6	-12.9
Եկամուտներ (զուտ)	12.9	-2.9	14.9	17.4
Մասնավոր տրանսֆերտներ (զուտ)	27.1	38.9	46.8	57.0
Պաշտոնական տրանսֆերտներ (զուտ)	1.6	7.8	21.0	8.7

Կապիտալի և ֆինանսական հաշիվ. 2006թ. առաջին եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվի ավելցուկը կազմել է 112.8 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով ավելանալով 11.9 մլն ԱՄՆ դոլարով: Վերջինիս աճին նպաստել է գրեթե բոլոր հոդվածների գծով զուտ ներհոսքի աճը: Առաջին եռամսյակում գրանցվել է կապիտալ տրանսֆերտների փոքր- ինչ նվազում տարեկան կտրվածքով:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները ֆինանսավորել են ընթացիկ հաշվի պակասուրդի 41.6%-ը (50.0 մլն ԱՄՆ դոլար), այլ կապիտալի ներհոսքը՝ 40.2%-ը (48.3 մլն ԱՄՆ դոլար): Կապիտալ տրանսֆերտների մասնակցությունը ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորմանը չնչին է եղել, իսկ պետական հատվածի վարկերի զուտ տեղաբաշխման ֆինանսավորումը կազմել է 7.9% (9.5 մլն ԱՄՆ դոլար): Ընթացիկ հաշվի ու կապիտալի և ֆինանսական հաշվի վերը նշված հոսքերի պայմաններում ԿԲ ՁԱԱ-ը նվազել է 6.6 մլն ԱՄՆ դոլարով:

2006 թ. I եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդն ավելին էր, քան կապիտալի ներհոսքը




Դրամավարկային զարգացումներ

Գնաճի նպատակադրման ռազմավարությանն անցման և դրամավարկային գործիքների կիրառման պայմաններում համախառն պահանջարկն արտացոլվել է հետևյալ դրամավարկային ցուցանիշներում. փողի զանգվածը եռամսյակի վերջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 27.6%-ով և կազմել մոտ 360.0 մլրդ դրամ: Դրամային զանգվածը նույն ժամանակահատվածում ավելացել է 49.8%-ով, իսկ փողի բազան՝ 62.4%-ով՝ կազմելով համապատասխանաբար 211.0 մլրդ և 189.0 մլրդ դրամ:


Փողի զանգվածի կառուցվածքում դրամային ավանդներն ավելացել են 49.8%-ով, արտարժութային ավանդները՝ 11.3%-ով և կազմել համապատասխանաբար 78.0 մլրդ և 148.0 մլրդ դրամ:

Փողի զանգվածի վարքագիծն ըստ բաղադրատարրերի



Ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի, երբ ընթանում էր դրամայնացման ակտիվ գործընթաց, այս տարվա առաջին եռամսյակում դրա տեմպերը զգալի դանդաղել են:


Դրամով և արտարժույթով ավանդների վարքագիծը՝ ըստ ժամկետայնության



Չնայած նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ եռամսյակի վերջին արձանագրվել է դրամային ավանդների բավականին մեծ աճ, այնուամենայնիվ այն զիջել է կանխատեսումներին, իսկ արտարժութային ավանդների աճը գերազանցել է կանխատեսված տեմպերը: Հետևաբար, արձանագրվել են դոլարայնացման նվազման ավելի դանդաղ տեմպեր, քան կանխատեսված էր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 17.9%-ի փոխարեն՝ 13.8%:


Տարվա առաջին եռամսյակի ընթացքում արժույթի փոխարինման երևույթի տեմպերի դանդաղումն արտահայտվել է փողի պահանջարկի հետևյալ կառուցվածքային փոփոխություններով: Շրջանառությունում կանխիկը 2006 թվականի առաջին եռամսյակում նվազել է 9.7%-ով, իսկ դրամային ավանդներն ավելացել են ընդամենը 0.2%-ով՝ պայմանավորված տարեսկզբին սովորաբար դրսևորվող՝ դրամի պահանջարկի անկմամբ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մեղմվել էր դրամայնացման դրսևորումներով (արձանագրվել էր նշված ցուցանիշների համապատասխանաբար 7.3% նվազում և 14.6% աճ): Նույն գործոնով պայմանավորված՝ այս տարվա առաջին եռամսյակում արձանագրվել է արտարժութային ավանդների 4.8% աճ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 5% նվազում):

Ապադոլարայնացման շարունակական ընթացքը 2005 – 2006 թթ.




2006 թվականի առաջին եռամսյակում բանկերի կողմից տնտեսության վարկավորման (թե՛ դրամով, թե՛ արտարժույթով) աճի տեմպերն արագացել են (մարտին, նախորդ տարվա մարտի համեմատ՝ 42.8% աճ՝ 2005 թվականի 35.3% աճի փոխարեն): Այդուհանդերձ, դրամայնացման տեմպերի դանդաղումն այստեղ ևս ունեցել է իր ազդեցությունը, քանի որ եռամսյակի ընթացքում արտարժութային վարկերի աճը գերազանցել է դրամային վարկերի աճի տեմպերը՝ համապատասխանաբար 8.8% և 4.4%-ով:

Ապադոլարայնացումը արտացոլված է նաև ըստ արժույթների տնտեսությանը տրված վարկերի ծավալներում




Ինչպես փողի, այնպես էլ դրամային բազմարկիչները 12-ամսյա նվազման ավելի մեծ տեմպեր են ունեցել, քան կանխատեսված էր. համապատասխանաբար՝ 16.4% և 1.8%:

Փողի և դրամային բազմարկիչները




Տնտեսության փողայնացման գործակցի աճն ավելի մեծ է եղել կանխատեսվածից, մինչդեռ դրամայնացման աճը զիջել է կանխատեսված ցուցանիշը: Փողայնացումն ավելացել է 34.5%-ով, իսկ դրամայնացումը՝ 14.5%-ով:

Տնտեսության փողայնացման մակարդակը




Առաջին եռամսյակում ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականությունն արտացոլել է փողի բազայի շուրջ 11.5 մլրդ դրամ կամ 5.7% նվազումը:

Կանխիկի աճը վկայում է ազգային արժույթի նկատմամբ պահանջարկի աճի մասին




Փողի բազայի վարքագիծը ըստ ՋԱԱ-ի և ՋՆԱ-ի



Փոզի բազայի նվազումը եռամսյակի ընթացքում գերակշիռ մասով՝ 10.3 մլրդ դրամ կամ 72.7%, բաժին է ընկել ԿԲ ՋՆԱ-ին, այն դեպքում, երբ ԿԲ ՋԱԱ-ը նվազել է ընդամենը 1.2 մլրդ դրամով կամ 0.5%-ով: Այդուհանդերձ, 12-ամսյա միտումների համաձայն, արձանագրվել է նշված բոլոր ցուցանիշների խոշոր աճ. փողի բազան ավելացել է 62.4%-ով, ԿԲ ՋԱԱ-ը և ՋՆԱ-ը՝ համապատասխանաբար 23.4%-ով և 47.2%-ով:

Ինչպես արդեն նշվել է, տարեսկզբին դրամայնացման գործընթացի տեմպերը զգալի դանդաղել են, ինչն արտահայտվել է շրջանառությունում կանխիկի, հետևաբար և ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկի վարքագծում: Այսպես, եռամսյակի ընթացքում ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկը նվազել է 14.0 մլրդ դրամով կամ 9%-ով, իսկ 12-ամսյա աճը կազմել է շուրջ 43%: Կանխիկի նվազումն ավելի քան 2 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նվազման տեմպերը՝ դրսևորելով հիմնականում 2004 թվականի առաջին եռամսյակի սեզոնայնությունը:

Տարեսկզբից դանդաղել են ՀՀ ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկի 12-ամսյա աճի տեմպերը



Չնայած 2006 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված դրամավարկային քաղաքականության ազդեցությունը գների վրա անդրադառնում է որոշակի լագով, այնուամենայնիվ արդեն առաջին եռամսյակում նկատվել է գնաճային ճնշումների թուլացում. հունվարին՝ նախորդ ամսվա նկատմամբ գնաճը կազմել է 3.6%, փետրվարին՝ 0.4%, մարտին ՝ 0.2%: 2006 թվականի մարտին 12-ամսյա գնաճը կազմել է 0.3%՝ կանխատեսված 0.4%-ի փոխարեն: 2005 թվականի դեկտեմբերի նկատմամբ մարտին գնաճը կազմել է 4.2%՝ կանխատեսված 4.4%-ի փոխարեն:

Գնաճի փաստացի ցուցանիշի վրա ազդեցություն են ունեցել տնտեսության առանձին հատվածների ազդակները (առավել մանրամասն ներկայացվում են համապատասխան բաժիններում): Մակրոտնտեսական ցուցանիշներն արձանագրվել են տարեսկզբի համար կանխատեսվածի շրջանակներում. արտաքին միջավայրը զարգացել է ըստ կանխատեսվածի, տնտեսության ճյուղային զարգացումները, թեև որոշ չափով շեղվել են կանխատեսվածից, այնուամենայնիվ տնտեսական աճը սպասվածի շրջանակներում է եղել: Սրանք գնաճի վրա ազդեցության առումով լրացուցիչ ճնշումներ չեն ստեղծել: Իրական հատվածում շեղումները պայմանավորվել են հունվարին հանրապետություն գազի մատակարարման խափանմամբ, որը հանգեցրել է արդյունաբերության իրական ցածր աճի, ինչի ազդեցությունը տնտեսական աճի վրա փոխհատուցվել է ծառայությունների ոլորտի՝ կանխատեսվածից արագ աճով:

Կանխատեսվել էր հարկաբյուջետային հատվածի ընդլայնող ազդեցություն գնաճի վրա, սակայն արձանագրվել է զսպողական ազդեցություն: Տնտեսության իրական, արտաքին և հարկաբյուջետային հատվածների զարգացումների ներքո դրամավարկային հատվածի ցուցանիշները նույնպես կանխատեսվածի շրջանակներում են եղել, սակայն, ինչպես նշվել էր, արձանագրվել են ՀՀ դրամ-արտարժույթ հարաբերակցության որոշակի կառուցվածքային տարբերություններ՝ պայմանավորված դրամայնացման գործընթացի տեմպերի նվազմամբ: Ընդհանուր առմամբ, ԿԲ-ն բավարարել է տնտեսության փողի պահանջարկը, միաժամանակ հետևելով գնաճային ճնշումների չեզոքացմանը:

Համախառն պահանջարկ և առաջարկ

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[17]
ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Մասնավոր սպառում և ներդրումներ. Վերջին տարիներին տնտեսական աճի՝ սպասվածից բարձր մակարդակի արձանագրման միտումը դրսևորվել է նաև 2006 թվականի առաջին եռամսյակում, որն ուղեկցվել է համախառն պահանջարկի կառուցվածքի շարունակվող փոփոխություններով:

Ինչպես և 2005 թվականին, 2006 թվականի առաջին եռամսյակի 8% տնտեսական աճն ամբողջությամբ ապահովվել է ներքին պահանջարկի աճի հաշվին, մինչդեռ զուտ արտահանումը նվազել է:

Ընդ որում, առաջին եռամսյակի ներքին պահանջարկի կառուցվածքում շարունակաբար արձանագրվել է մասնավոր հատվածի ծախսերի ավելացում: Սակայն, եթե նախորդ տարի դա տեղի էր ունեցել հիմնականում մասնավոր ներդրումների զգալի աճի հետևանքով, ապա 2006 թվականի առաջին եռամսյակում մասնավոր ներդրումների աճի դանդաղման պարագայում արձանագրվել է մասնավոր սպառման իրական աճի արագացում՝ պայմանավորված բարձր տնտեսական աճի շարունակման արդյունքում բնակչության եկամուտների ավելացմամբ, ինչպես նաև մասնավոր տրանսֆերտների շարունակվող մեծածավալ ներհոսքով: Վերջինս տարվա հաջորդ եռամսյակներում գնաճային ճնշումներ կարող է առաջացնել սպառողական շուկայում:


Առաջին եռամսյակում մասնավոր ներդրումների աճի տեմպը չնայած նախորդ տարվա համեմատ որոշակի դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակի վրա՝ կազմելով 14.7%, և, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս ուղղվել է արդյունաբերության և ծառայությունների ոլորտ:

Պետական սպառում և ներդրումներ[18]. 2006 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է 1.1 տոկոս զսպող ազդեցություն. եկամուտների ազդակը կազմել է 5.4 տոկոս զսպող, իսկ ծախսերինը՝ 4.3 տոկոս ընդլայնող: Ծախսերի ընդլայնող ազդակը ձևավորվել է նախորդ տարվա առաջին եռամսյակի ծախսերի համեմատ 2006թ. նույն ժամանակահատվածում ծախսերի զգալի աճի հետևանքով:

2006 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է ծախսերի 26 տոկոս աճ, իսկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշն աճել է 5.6 տոկոսային կետով: Ընդ որում, ընթացիկ ծախսերն ավելացել են 26 տոկոսով, իսկ պետական սպառումը՝ 26.4 տոկոսով:

Պետական սպառումը ՀՆԱ-ում ավելացել է 2.9 տոկոսային կետով, այն դեպքում, երբ 2005 թվականին պետական սպառման աճը ՀՆԱ-ում կազմել էր 0.4 տոկոսային կետ: Տրանսֆերտներն ավելացել են 31.5 տոկոսով, իսկ ՀՆԱ-ում՝ 2.16 տոկոսային կետով: Նվազել են միայն սուբսիդիաները՝ 4.4 տոկոսով:

2006 թ. առաջին եռամսյակում հարկաբյուջետային ազդակի զսպողական ազդեցության դրսևորումը



2006 թվականի առաջին եռամսյակի համախառն պահանջարկի ձևավորման վրա կարևոր դեր են խաղացել նաև 2005 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսին իրականացված բյուջեի մեծածավալ ծախսերը: Այն վճռորոշ է եղել նաև 2005 թվականի երկրորդ կիսամյակի, ինչպես նաև տարվա արդյունքում ծախսերի ընդլայնող ազդակի ցուցանիշի ձևավորման տեսանկյունից:

---

[17] Համախառն պահանջարկի բաղադրատարրերի իրական աճերը ՀՀ ԿԲ գնահատումներն են:

[18] Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է ԱԾՎ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թ. հունվար -ապրիլին» տեղեկագրի 2006 թվականի հունվար-մարտի ՀՀ համախմբված բյուջեի փաստացի ցուցանիշների և ՀՀ ԿԲ մշակած ֆինանսական ծրագրավորման հարկաբյուջետային հատվածի համախմբված բյուջեի ծրագրային ցուցանիշների հիման վրա: ԿԲ ֆինանսական ծրագրավորման հիմքում դրված պետական հատվածի եռամսյակային կանխատեսումները կատարված են ըստ ՀՀ ԿԲ կողմից մշակված մեթոդաբանության և տարբերվում են 2006 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի եռամսյակային համամասնություններից:

2006 թվականի առաջին եռամսյակում ձևավորված եկամուտների զսպողական ազդակը պայմանավորվել է ինչպես հարկային եկամուտների՝ եռամսյակի համար ծրագրված ցուցանիշի գերակատարմամբ, այնպես էլ ծրագրվածի համեմատ ՀՆԱ փաստացի ավելի ցածր մակարդակի արձանագրմամբ (պատճառը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ՀՆԱ դեֆլյատորի 1 տոկոսով նվազումն է):

Առաջին եռամսյակում համախմբված բյուջեի եկամուտները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 15 տոկոսով. հարկային եկամուտների աճը կազմել է 20.7 տոկոս, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները նվազել են 22.6 տոկոսով[19]: 2005թ. առաջին եռամսյակի համեմատ 2006 թ. առաջին եռամսյակի համախմբված բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում աճել են 2.6 տոկոսային կետով, իսկ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը՝ 3.9 տոկոսային կետով: Առաջին եռամսյակի ընթացքում շարունակվել է հարկային եկամուտների՝ ծրագրվածի համեմատ ավել հավաքագրման նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված միտումը, որը հավանաբար կպահպանվի մինչև տարեվերջ:


Հարկային եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի տեսակարար կշռի նվազման և ուղղակի հարկերի տեսակարար կշռի աստիճանական ավելացման՝ նախորդ տարվա ընթացքում դրսևորված միտումը շարունակվել է նաև այս տարվա առաջին եռամսյակում: Այսպես, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ 5.1 տոկոսային կետով ավելացել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով հարկերի 21.7 տոկոսը, և 7.6 տոկոսային կետով նվազել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով հարկային եկամուտների 50.8 տոկոսը:

Ուղղակի հարկերի աճը հիմնականում ապահովվել է եկամտահարկի և շահութահարկի հաշվին, որոնց աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է համապատասխանաբար՝ 46 տոկոս և 73 տոկոս: Դրամաշնորհները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են մոտ 75 տոկոսով:

2006 թվականի առաջին եռամսյակում շարունակվել է հարկային եկամուտների անհամաչափ հավաքագրման հարթման միտումը՝ ամսվա վերջին երեք օրը հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը առաջին եռամսյակում կազմել է 18.5 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին 19.7 տոկոսի փոխարեն:

Հարկային եկամուտների հավաքագրման անհամաչափության հարթումը եռամսյակի ընթացքում չի ուղեկցվել ծախսերի կատարման համաչափ բաշխվածությամբ: Ընդհանուր առմամբ, փողի բազայի փոփոխությունները ամսական կտրվածքով, իսկ ավելի ցայտուն՝ հունվարին, հիմնականում պայմանավորվել են Կառավարության միջոցների փոփոխություններով:

ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության միջոցների և փողի բազայի փոփոխությունների համահունչ բնույթը 2006 թ. առաջին եռամսյակում




Եռամսյակի արդյունքում ձևավորվել է համախմբված բյուջեի հավելուրդ, որը կազմել է 3.7 մլրդ դրամ՝ ծրագրված պակասուրդի դիմաց: Ընդ որում, արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը կազմել է 3.6 մլրդ, իսկ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը՝ -7.3 մլրդ դրամ: Նշենք, որ համայնքների բյուջեի և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի հաշվեկշիռներն ունեցել են բացասական մեծություններ (պակասուրդային), իսկ պետական բյուջեն ունեցել է դրական (խնայողա-

[19] *Եկամուտների ազդակի գնահատման ժամանակ 2005 թվականի առաջին եռամսյակի եկամուտները դիտարկվել են առանց ոչ հարկային եկամուտների մեջ ներառված Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականաշնորհումից ստացված մուտքերի (քանի որ դա տնտեսությունից հավաքագրված գումար չէր), և այդ պարագայում եկամուտների աճը կազմել է 24.4 տոկոս, որով էլ բացատրվում է ազդակի մեծ զսպողական ազդեցությունը:*

կան) վարքագիծ: Այսպես, եռամսյակի ընթացքում ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում կուտակվել է 5.1 մլրդ դրամ՝ ընթացիկ ծախսերի գծով առաջացած խնայողությունների արդյունքում:

Պետական արժեթղթերից զուտ ֆինանսավորումը կազմել է 1.2 մլրդ դրամ, կամ հավելուրդի 32 տոկոսը:

Հավելուրդի աղբյուրների կառուցվածքում բանկային հատվածի խնայողությունների նվազումը



2006 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կապիտալ ծախսերն ավելացել են 27 տոկոսով, իսկ զուտ վարկավորումը՝ 20 տոկոսով: Կապիտալ ծախսերի կառուցվածքում շարունակվել է ներքին ֆինանսավորման հաշվին իրականացված ծախսերի՝ նախորդ տարվանից դրսևորված աճի միտումը. կապիտալ ծախսերի 63 տոկոսն իրականացվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ 37 տոկոսը՝ արտաքին աղբյուրների (նախորդ տարի՝ համապատասխանաբար 68.4 և 31.6 տոկոս): Նշենք, որ պետական ներդրումները 2005 թվականին ավելացել են 45.2 տոկոսով, իսկ ՀՆԱ-ում նշված ցուցանիշը ապահովել է 0.9 տոկոսային կետ աճ:

Զուտ արտաքին պահանջարկ 2006 թվականի առաջին եռամսյակի ընթացքում, ի տարբերություն նախորդ տարվա, զգալի նվազել են ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալները: Առաջին եռամսյակում արտահանման աճի տեմպերի նվազմանը զգալիորեն նպաստել է ոչ թանկարժեք մետաղների արտահանման իրական ծավալների նվազումը, որը կազմել է 10.5% (2005 թվականի առաջին եռամսյակում՝ 180% աճ), որն իր հերթին պայմանավորվել է միջազգային շուկայում գնանավոր մետաղների գների աճի տեմպերի դանդաղմամբ: Բացի այդ, նշված ժամանակահատվածում արտահանման իրական ծավալների 10.7% նվազումը ժամանակավոր բնույթ է կրել, քանի որ տեղի է ունեցել կոնյակի արտահանման ծավալների նվազման հետևանքով: Հաշվի առնելով, որ կոնյակի արտադրության աճի տեմպերը չեն դանդաղել, ակնկալվում է, որ արտահանումը զգալիորեն ավելանալու է տարվա հաջորդ ամիսներին՝ որևէ ազդեցություն չթողնելով ներքին սպառողական շուկայում:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների իրական աճը 2003-2006 թվականների առաջին եռամսյակներում

Ցուցանիշներ	2003	2004	2005	2006
Իրական ՀՆԱ	12.5	7.4	7.8	8.0
Ներքին պահանջարկ	9.8	9.0	9.6	9.1
Սպառում	8.8	8.6	8.8	8.3
Պետական	22.6	10.4	20.4	8.8
Մասնավոր	7.0	8.3	7.1	8.2
Կապիտալ ներդրումներ	18.4	12.4	15.8	14.8
Պետական	27.9	-0.6	-3.0	15.1
Մասնավոր	13.3	20.2	25.1	14.7
Արտահանում	17.0	9.1	7.4	-10.7
Ներմուծում	15.0	10.6	21.3	2.7

ՀՆԱ իրական աճի՝ վերջին տարիներին արձանագրված բարձր մակարդակը պահպանվել է նաև 2006 թվականի առաջին եռամսյակում՝ կազմելով 8.0%: Շարունակվել են նաև տնտեսության ճյուղային կառուցվածքում նախորդ տարիներին տեղի ունեցած փոփոխությունները, չնայած որոշ ճյուղերում առկա են շեղումներ նախորդ միտումներից:

2005 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի բարձր աճը, որը գրանցվել է բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ բուսաբուծության արտադրանքի աճի հաշվին, գնանկումային ճնշումներ է ձևավորել սպառողական շուկայում՝ հանգեցնելով տարվա վերջին, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, 0.6% գնանկման: Ի տարբերություն դրան, 2006 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը 2.4 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը և կազմել 3.5%: Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ դա հիմնականում պայմանավորված էր նախորդ տարվա առաջին եռամսյակում անասնապահության թողարկման ծավալների նվազմամբ, որևէ գնանկումային ճնշում չի առաջացնի սպառողական շուկայում:

Արդյունաբերության ոլորտում 2006 թվականի առաջին եռամսյակում նույնպես նախորդ տարվա համեմատ արձանագրվել է հակադարձ միտում: Ի տարբերություն նախորդ տարվա, որի ընթացքում արձանագրվել էին արդյունաբերության իրական աճի բարձր տեմպեր, 2006 թվականի առաջին եռամսյակում արդյունաբերության արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը նվազել է 4.7%-ով՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի 5.1% աճի փոխարեն: Նման անկումը պայմանավորվել է հիմնականում քիմիական արդյունաբերության և թանկարժեք իրերի արտադրության ծավալների նվազմամբ, ինչպես նաև մետաղագործական արդյունաբերության իրական աճի տեմպերի զգալի դանդաղմամբ: Վերջինս մեծապես պայմանավորվել է արտաքին շուկաներում գունավոր մետաղների գների աճի դանդաղմամբ, ինչպես նաև որոշ գործարաններում ընթացող կապիտալ նորոգման աշխատանքներով:

Հաշվի առնելով, որ անկում է արձանագրվել միայն արտադրական նշանակության ճյուղերում, իսկ սպառողական ապրանքների արտադրության ծավալներն ավելացել են 9.2%-ով, ողջ արդյունաբերության իրական նվազումը խթանող ազդեցություն չի թողնի սպառողական շուկայում գնաճի ձևավորման վրա:

Այդուհանդերձ, համաձայն ԿԲ կողմից կատարված կանխատեսումների, տարվա հաջորդ եռամսյակներում ակնկալվում է արդյունաբերության իրական աճի տեմպերի որոշ չափով վերականգնում:

Շինարարության ոլորտում շարունակվել են նախորդ տարվա բարձր աճի միտումները, որի արդյունքում կապիտալ շինարարության իրական ծավալներն ավելացել են 25.2%-ով: Եթե նախորդ տարի կապիտալ շինարարության ֆինանսավորումը ավելացել էր բոլոր աղբյուրների հաշվին, 2006 թվականի առաջին եռամսյակում կապիտալ շինարարության ծավալների աճը ամբողջությամբ տեղի է ունեցել կազմակերպությունների միջոցների հաշվին ֆինանսավորվող շինարարության ծավալների կրկնակի ավելացման շնորհիվ:

Կապիտալ շինարարության ծավալների շարունակական աճը գնաճի վրա ազդելու է ավելացման ուղղությամբ՝ ճյուղում աշխատավարձերի ավելացման միջոցով:

Տարվա հաջորդ ամիսներին կապիտալ շինարարության ծավալների ակնկալվող բարձր աճը կպայմանավորվի ինչպես մասնավոր հատվածում, այդ թվում՝ բնակելի շինարարությունում կանխատեսվող ներդրումներով, այնպես էլ տարվա վերջին եռամսյակի ընթացքում Լինսի հիմնադրամի միջոցների սպասվող ներհոսքով, որը հիմնականում հատկացվելու է ճանապարհաշինարարությանը:

Ծառայությունների և առևտրի ոլորտում վերջին հինգ տարիներին անընդհատ արձանագրվել են բարձր աճի տեմպեր՝ հիմնականում պայմանավորված բնակչության եկամուտների շարունակական ավելացմամբ: Ընդ որում, եռամսյակի ընթացքում գրանցվել է այդ աճի տեմպի զգալի արագացում (2006 թվականի առաջին եռամսյակում առևտրի և ծառայությունների ծավալներն ավելացել են 20.4%-ով՝ նախորդ տարվա առաջին եռամսյակում՝ 5.1%-ով)՝ պայմանավորված ինչպես կապի ծառայություններից ստացված իրական հասույթի մոտ 38% աճով (հիմնականում՝ սակագների նվազման հետևանքով բջջային հեռախոսակապից հասույթի համարյա կրկնապատկման հաշվին), այնպես էլ առևտրի շրջանառության մեջ ավտոմեքենաների առևտրի 77%-ով ավելացմամբ:

Համաձայն ՀՀ ԿԲ կանխատեսումների, ակնկալվում է, որ տարվա հաջորդ եռամսյակներում ծառայությունների ոլորտում շարունակվելու է աճի տեմպերի արագացման միտումը, որը մասամբ պայմանավորված կլինի անկախության 15-ամյակի կապակցությամբ 2006թ. իրականացվելիք տոնակատարություններով: Այսպիսով, ծառայությունների ոլորտի արագացված աճը գնաճային ճնշումներ կառաջացնի տարվա հաջորդ ամիսներին:

2006 թվականի առաջին եռամսյակում անուղղակի հարկերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 4.2 տոկոսով, իսկ զուտ անուղղակի հարկերը՝ 8.1 տոկոսով: Զուտ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

համեմատ, նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 15.5 տոկոս: Ուստի կարելի է ենթադրել, որ զուտ անուղղակի հարկերը համախառն պահանջարկի, հետևաբար գնաճի վրա ունեցել են փոքր-ինչ զսպող ազդեցություն (2005 թվականին ՀՆԱ-ում զուտ անուղղակի հարկերը աճել էին 0.2 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 8.3 տոկոսը):

Աշխատանքի շուկա

Տնտեսական աճի բարձր մակարդակի՝ վերջին երեք տարիներին արձանագրված միտումները շարունակաբար դրսևորվելով այս տարվա առաջին եռամսյակում, իրենց արտացոլումն են գտել նաև աշխատանքի շուկայում՝ հանգեցնելով աշխատուժի նկատմամբ պահանջարկի շարունակական աճի և դրա արդյունքում՝ աշխատավարձերի մակարդակի բարձրացման: Վերջինս, անկասկած, գնաճային ճնշումներ է ստեղծելու սպառողական շուկայում տարվա հաջորդ ամիսներին՝ մասամբ փոխանցվելով նաև հաջորդ տարի:

2005 թվականին աշխատուժի շուկայում զարգացումները համահունչ են եղել տնտեսական ակտիվության աճին, և արդյունքում նվազել է պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակը: Միևնույն ժամանակ, աշխատավարձը բարձրացել է տնտեսության բոլոր ճյուղերում. մասնավորապես՝ միջին ամսական աշխատավարձի զգալի աճ է գրանցվել սոցիալական ոլորտում: Տնտեսական աշխուժացման և աշխատուժի շուկայում մրցակցության ավելացման արդյունքում աշխատավարձի անհավասարաչափ բաշխումը ըստ տնտեսության ճյուղերի որոշ չափով մեղմվել է:

Աշխատուժի շուկայի դրական տեղաշարժերի շարունակական դրսևորման պայմաններում գործազրկության մակարդակը 2006 թվականի առաջին երեք ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է մոտ 1.3 տոկոսային կետով՝ կազմելով ընդամենը 7.6%: Ընդ որում, համաձայն ԱՎԾ տվյալների՝ շարունակվել է վերջին երեք տարիներին դրսևորվող՝ ցածրորակ (բանվորական) աշխատուժի նկատմամբ պահանջարկի առաջանցիկ աճի միտումը, որի արդյունքում այն կազմել է ողջ աշխատուժի նկատմամբ պաշտոնապես ներկայացված պահանջարկի մոտ 78%-ը:

Գործազրկության մակարդակի նվազման պարագայում շարունակել է բարձրանալ միջին ամսական աշխատավարձի մակարդակը՝ հունվար-մարտին կազմել է 17.3%, որի արդյունքում առաջին եռամսյակում միջին աշխատավարձը կազմել է մոտ 55.6 հազար դրամ: Ընդ որում, բյուջետային աշխատողների աշխատավարձերի միջին մակարդակի աճը գերազանցել է մասնավոր հատվածում աշխատավարձի աճի ցուցանիշը և կազմել է 21.1%, իսկ արդյունաբերությունում, որը հիմնական արտահանող ճյուղն է, աշխատավարձի իրական աճը հունվար-փետրվարի դրությամբ մոտ 5 տոկոսային կետով զիջել է ընդհանուր աշխատավարձի աճի ցուցանիշը: Աշխատավարձը զգալի՝ 37.8%-ով բարձրացել է կապի ոլորտում, որի արդյունքում այստեղ աշխատավարձի միջին մակարդակը մոտ 38.2%-ով գերազանցել է ՀՀ-ում աշխատավարձի միջին մակարդակը: Աշխատավարձի բարձր աճ է արձանագրվել նաև տնտեսության հիմնական ճյուղերում, ինչպես նաև կրթության և արվեստի բնագավառներում: Իրական աշխատավարձի ցուցանիշը, պահպանելով նախորդ տարիներին արձանագրված աճի բարձր տեմպերը, մարտի դրությամբ ավելացել է 16%-ով:

Առաջին եռամսյակի ընթացքում աշխատուժի արտադրողականության աճը կազմել է 6.7%՝ զիջելով իրական աշխատավարձի աճի ցուցանիշը և արդյունքում գնաճային ճնշումներ առաջացրել սպառողական շուկայում:

Արտադրողականության նկատմամբ իրական աշխատավարձի առաջանցիկ աճի շարունակման պարագայում, տարվա հաջորդ ամիսներին կարելի է ակնկալել աշխատուժի շուկայի կողմից որոշակի գնաճային ճնշումների դրսևորում:

Ներմուծման և ներքին արտադրանքի գներ

Ներմուծման և տեղական արտադրանքի գները (առաջարկի առումով) շարունակել են ընդլայնող ազդեցություն ունենալ գնաճի վրա: Ներմուծման գները տարեկան կտրվածքով դրսևորել են բավականին բարձր աճի տեմպեր, որը չնայած որոշ չափով փոխհատուցվել է դրամի փոխարժեքի արժևորմամբ,

սակայն իր որոշ ընդլայնող արտահայտությունն է ստացել ՀՀ գնաճի ցուցանիշում: Դա հիմնականում պայմանավորվել է միջազգային շուկայում հումքային ապրանքների գների բարձր աճի պահպանվող տեմպերով, որը նաև ներքին արտադրանքի (հիմնականում արդյունաբերության) գների բարձր աճի հիմք է հանդիսացել:


ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐ

Այնպիսի փոքր բաց տնտեսություն ունեցող երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, ներմուծված ապրանքների գները համարվում են գնաճի ամենակարևոր գործոններից մեկը՝ առաջարկի տեսանկյունից: Համաձայն Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2006 թվականի առաջին եռամսյակի ներմուծման գների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 11.4 տոկոս՝ դրսևորելով աճի արագացման միտումներ:

Ցուցանիշներ	1 եռ. 2005	2 եռ. 2005	3 եռ. 2005	4 եռ. 2005	1 եռ. 2006	Կշիռներ
Ներմուծում	5.7	6.0	7.6	7.1	11.4	
Կապիտալ ապրանքներ[20]	-1.5	-0.6	0.2	0.0	0.0	8.0%
Սպառողական ապրանքներ	9.2	10.1	8.0	3.4	2.5	24.0%
Հումքային ապրանքներ	-5.0	-5.0	0.0	9.7	22.1	35.0%
Ադամանդ[1]	0.0	0.0	0.0	0.0	0.0	17.0%
Նավթամթերք	49.1	45.4	48.0	28.9	29.5	10.0%
Բնական գազ	0.0	0.0	0.0	0.0	0.0	6.0%

Նշված ժամանակահատվածում շարունակվել են նավթամթերքների գների բարձր աճի տեմպերը, չնայած այդ աճի տեմպերի որոշակի նվազմանը: Համաշխարհային շուկայում դեռևս պահպանվող աշխարհաքաղաքական անորոշությունները և վերամշակվող հզորությունների պակասը դեպի վեր են մղում նավթի միջազգային գները, սակայն վերջիններս արդեն իսկ այնպիսի մակարդակի վրա են (ավելի քան 60 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց), որ սկսում է կրճատվել նավթամթերքների նկատմամբ պահանջարկը:

Հումքային ապրանքների գները ամենամեծ ազդեցությունն են ունեցել ներմուծման գների վրա




Մյուս կողմից, առաջին եռամսյակը բնութագրվել է հումքային ապրանքների գների աճի տեմպերի կտրուկ արագացմամբ՝ պայմանավորված թանկարժեք մետաղների և շաքարավազի միջազգային գների բարձրացմամբ: Թանկարժեք մետաղների գների աճը հիմնականում բացատրվում է աշխարհաքաղաքական ռիսկերի և համաշխարհային անհաշվեկշռվածությունների պարագայում ներդրողների կողմից հուսալի ներդրում ապահովելու հատկությամբ: Շաքարի միջազգային գների թանկացումը (եռամսյակի ընթացքում՝ 25.6 տոկոս, իսկ մեկ տարվա կտրվածքով՝ մոտ 2 անգամ) մասնագետները վերագրում են շաքարեղեգից էթանոլի (որպես էներգիայի այլընտրանքային աղբյուր) ստացման արդյունաբերության զարգացմանը:

[20] Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատումների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով նշված ապրանքների գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:

Ներմուծված սպառողական ապրանքների գների աննշան աճի վրա հիմնական գործընկեր երկրների փոխարժեքների ազդեցությունը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, կազմել է -3.3 տոկոսային կետ, իսկ գների ազդեցությունը՝ 4.9 տոկոսային կետ: Եվրո/ԱՄՆ դոլար փոխարժեքի փոփոխությունը (որն ամենամեծ ազդեցությունն ունի փոխարժեքների ցուցանիշների մեջ) տարեկան կազմել է 9.4 տոկոս՝ ԱՄՆ դոլարի արժևորման ուղղությամբ[21]: Սպասվածից բարձր են եղել նաև Ռուսաստանից ներմուծվող սպառողական ապրանքների գները՝ Ռուսաստանում գրանցված բարձր գնաճի (տարեկան կտրվածքով ավելի քան 10 տոկոս) և ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու կայունության պատճառով (ընդամենը մոտ 1 տոկոս արժեզրկում):

Նավթամթերքների դրամային գների աճը զսպվել է փոխարժեքի արժևորման պատճառով



ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը, չնայած տեմպերի նվազմանը (տարեկան կտրվածքով ՀՀ դրամը արժևորվել է 5.8 տոկոսով՝ նախորդ եռամսյակում գրանցված 10.1-ի փոխարեն), որոշակիորեն չեզոքացրել է արտաքին աշխարհի կողմից գների վրա ընդլայնող ազդեցությունը: Վերջինս այնուամենայնիվ, իր որոշ ընդլայնող արտահայտությունն է ստացել ՀՀ գնաճի ցուցանիշում, քանի որ ներմուծման դրամային գների աճը կազմել է 5.0 տոկոս:

ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐ

2006 թվականի առաջին եռամսյակում ճյուղային գների վարքագծի վրա շարունակել են ազդեցություն ունենալ նախորդ տարվա ընթացքում դրսևորված ներքին և արտաքին գործոնները:

Այսպես, արդյունաբերության ճյուղում շարունակել է էական ազդեցություն ունենալ առավելապես արտաքին գործոնը՝ ի դեմս գունավոր մետաղների համաշխարհային գների, որի արդյունքում արդյունաբերողների արտադրանքի գների աճի՝ 2005 թվականին արձանագրված ցուցանիշի դանդաղումը 2006 թվականի առաջին եռամսյակում վերածվել է 5.1% նվազման: Արդյունաբերության մյուս ճյուղերում, բացառությամբ սննդի արդյունաբերության, նկատվել է գների աճ, որը հատկապես բարձր է եղել ոսկերչական (16.4%), մեքենաշինության (13.4%) և շինանյութերի արտադրության ենթաճյուղերում: Այսպես, կապիտալ շինարարության ծավալների շարունակական բարձր աճի արդյունքում զգալիորեն ավելացել է շինանյութերի արտադրության նկատմամբ պահանջարկը՝ հանգեցնելով դրանց գների 20%-ով ավելացման: Հաշվի առնելով այն, որ նշված զարգացումները սպառողական շուկայի վրա ազդեցություն չեն ունեցել, ուստի կարելի է ասել, որ արդյունաբերության ոլորտը թեպետ զգալիորեն զսպել է ՀՆԱ դեֆլյատորի ցուցանիշը, սակայն չեզոք է եղել ՀՀ-ում գնաճի ձևավորման առումով:

Շինարարության ոլորտում պահպանվել են նախորդ տարիներին, հատկապես 2005 թվականին արձանագրված գների բարձր աճի տեմպերը՝ պայմանավորված իրական աճի արագացման հետևանքով շինմոնտաժային աշխատանքների գնի ավելացմամբ: Արդյունքում, 2006 թվականի առաջին եռամսյակում շինարարության գների ինդեքսը ավելացել է 7.9%-ով՝ պահպանելով նախորդ տարվա առաջին եռամսյակի այդ ցուցանիշի նույն մակարդակը: Գնաճի վրա ազդեցության տեսանկյունից, շինարարության ոլորտն առանձնանում է իր անուղղակի փոխանցման ձևով՝ եկամուտների աճի միջոցով, որը ավելի երկարաժամկետ բնույթ ունի և դրսևորվելու է հիմնականում տարվա հաջորդ ամիսներին:


[21] *Տե՛ս «Արտաքին միջավայր» բաժինը:*

2006 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսական մթերքի իրացման գների աճը 2.9 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը կազմել էր 4.4%: Ընդ որում, եթե այս ճյուղի նպաստումը գնաճին նախորդ տարվա առաջին եռամսյակում արձանագրվել էր հիմնականում անասնապահության ենթաճյուղի գների 10.8% աճի հաշվին, ապա այս տարվա առաջին եռամսյակում պայմանավորվել է բուսաբուծության ենթաճյուղի գների 14.2% աճով: Վերջինս, բնականաբար, ընդլայնող ազդեցություն է ունեցել սպառողական գների մակարդակի բարձրացման վրա:

2006 առաջին եռամսյակում բեռնաշրջանառության ոլորտում արձանագրվել է սակագների 2.1% նվազում (նախորդ տարի՝ 7.1%-ով նվազում) Սակայն նվազել են միայն երկաթուղային (-2.9) և խողովակաշարային տրանսպորտի սակագները (-6.6), մինչդեռ ավտոմոբիլային և օդային տրանսպորտի սակագները բարձրացել են համապատասխանաբար 5.9% և 5.5%-ով: Սակագների որոշակի նվազում է արձանագրվել կապի ոլորտում, որը հանգեցրել է կապի ծառայությունների ծավալների աճի:

Տնտեսության ճյուղային գների վերը նշված դրսևորումների արդյունքում 2006 թվականի առաջին եռամսյակում ՀՆԱ դեֆլյատորը նվազել է 1%-ով, մինչդեռ նախորդ տարվա առաջին եռամսյակում այն աճել էր 6.2%-ով:

2006 թ. առաջին եռամսյակում ճյուղային գների ինդեքսները զգալիորեն զիջել են նախորդ տարվա առաջին եռամսյակի ցուցանիշներին



Արտաքին միջավայրի զարգացումներ

Արտաքին միջավայրի զարգացումների վերաբերյալ սպասումները տնտեսության իրավիճակի նկարագրության գնահատումից բխող հետևություններ են: Այս պարագայում Կենտրոնական բանկը առաջնորդվում է համաշխարհային հեղինակավոր կազմակերպությունների գնահատումներով՝ հիմնականում հիմք ընդունելով ԱՄՀ «Համաշխարհային տնտեսության տեսություն» (IMF, World Economic Outlook) պարբերականի կանխատեսումները: Նախորդ հրապարակման համեմատ, աճի ուղղությամբ են վերանայվել համաշխարհային տնտեսական աճի, զարգացած երկրների գնաճի և հումքային ապրանքատեսակների գները 2006 թվականին:

Ցուցանիշներ	2005	2006	2007
Համաշխարհային տնտեսություն			
Տնտեսական աճ	4.8	4.9	4.7
ԱՄՆ			
Տնտեսական աճ	3.5	3.4	3.3
Գնաճ	3.4	3.2	2.5
Եվրոգոտի			
Տնտեսական աճ	1.3	2.0	1.9
Գնաճ	2.2	2.1	2.2
Ռուսաստանի Դաշնություն			
Տնտեսական աճ	6.4	6.0	5.8
Գնաճ	12.6	10.4	9.5

ԱՄՆ տնտեսական աճի ցուցանիշը 2006 թվականի համար վերանայվել է 0.2 տոկոսային կետով՝ ավելացման ուղղությամբ (կազմել է 3.4 տոկոս): Նույն չափով ավելացվել է նաև Եվրոգոտու տնտեսական աճը և կազմել 2.0 տոկոս: Ռուսաստանի տնտեսական աճի ցուցանիշը ավելացվել է 0.8 տոկոսային կետով (6.0 տոկոս): Տնտեսական նման աճը, ինչը ենթադրում է նաև պահանջարկի աճ, բնականաբար անդրադարձել է նաև գնաճի ցուցանիշների վրա, որոնց մակարդակը նույնպես բարձր է կանխատեսվում:

	IV-05	I-06	II-06	III-06	IV-06	I-07
LIBOR 3-ամսյա տոկոսադրույք	4.3	4.8	5.1	5.2	5.2	5.1
USD/EUR փոխարժեք	1.19	1.20	1.25	1.27	1.28	1.30
RUR/USD փոխարժեք	28.7	28.2	27.5	27.3	27.2	27.1
Brent տեսակի նավթի գին (ԱՄՆ դոլար/1 բարել)	56.9	61.7	70.6	74.2	75.6	76.7
Ոսկու գին (ԱՄՆ դոլար /1 ունցիա)	485.6	552.8	648.3	680.0	700.0	716.7
Պղնձի գին (ԱՄՆ դոլար/1 տոննա)	4303.8	5239.6	7340.0	7175	6980.0	6800.0

Միջազգային ֆինանսական շուկաներում ազդեցություն ունեցող գործոնները շարունակում են զսպողական վարքագիծ դրսևորել՝ պայմանավորված ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի և Եվրոպական կենտրոնական բանկի վարած տոկոսադրույքների բարձրացման քաղաքականությամբ: Միևնույն ժամանակ, ԱՄՆ տնտեսության ընթացիկ հաշվի մեծ պակասուրդի հետևանքով ԱՄՆ դոլարը հիմնական արժույթների նկատմամբ ենթակա է արժեզրկման ճնշումների, որը պայմանավորում է նաև հումքային ապրանքների գների աճը: Այդ պատճառով աճի ուղղությամբ վերանայվել են գրեթե բոլոր հումքային ապրանքների գները՝ առաջնորդվելով թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների, ինչպես նաև նավթամթերքների գներով:

Ներքին տնտեսության զարգացումներ

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

Ակնկալվում է, որ տնտեսական աճի մոտ 10% մակարդակը 2006 թվականի ընթացքում կապահովվի հիմնականում կապիտալ շինարարության և ծառայությունների ճյուղերում ակնկալվող բարձր իրական աճի հաշվին, մինչդեռ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերում կանխատեսվում է աճի տեմպերի որոշակի դանդաղում:

Տնտեսության զարգացման վերը նկարագրված միտումները վկայում են, որ այդ զարգացումները շարունակվելու են նաև 2007 թվականի առաջին եռամսյակում, որի պարագայում ակնկալվում է տնտեսական աճի շուրջ 7.0% մակարդակ: Ընդ որում, նշված ժամանակահատվածում կանխատեսվում է արդյունաբերության աճի տեմպերի վերականգնում, որը կնկատվի 2006 թվականի երկրորդ եռամսյակից սկսած: Արդյունաբերության ճյուղի աճի տեմպերի վերականգնումը մասնավորապես կպայմանավորվի գունավոր մետաղագործության ենթաճյուղում նոր արտադրական հզորությունների գործարկման համար իրականացված ներդրումներով:

Գյուղատնտեսության ոլորտում էական տեղաշարժեր չեն ակնկալվում, մասնավորապես կապված այդ ճյուղի արտադրողականության բարձրացման հետ, ուստի մինչև տարեվերջ կպահպանվի այս տարվա առաջին եռամսյակում արձանագրված աճի մակարդակը: Նույնը կարելի է սպասել նաև 2007 թվականի առաջին եռամսյակի առումով, այսինքն՝ գյուղատնտեսությունում՝ ավելացված արժեքի աճի փոքր ցուցանիշի պահպանում:

Ինչպես 2006 թվականի տարեկան արդյունքներով, այնպես էլ 2007 թվականի առաջին եռամսյակում ակնկալվում է կապիտալ շինարարության աճի բարձր տեմպերի պահպանում, մասնավորապես հաշվի առնելով ընթացիկ շինարարական գործընթացների երկարաժամկետ բնույթը և սպասվող նոր ներդրումային ծրագրերը:

Նշված ժամանակահատվածներում ծառայությունների ոլորտում նույնպես պահպանվելու են աճի բարձր տեմպեր՝ պայմանավորված ինչպես բնակչության եկամուտների շարունակվող աճով, այնպես էլ կապի և տրանսպորտի ծառայությունների որոշակի աշխուժացմամբ:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ինչպես 2006 թվականի առաջին եռամսյակում, այնպես էլ մինչև տարեվերջ տնտեսական աճի սպասվող բարձր մակարդակը կպահպանվի ներքին պահանջարկի աճի հաշվին: Ակնկալվում է, որ մինչև տարեվերջ տարվա առաջին եռամսյակում արձանագրված աճի տեմպերը կպահպանվեն ներդրումների, մասնավորապես՝ մասնավոր ներդրումների աճի հաշվին:

Համախառն պահանջարկի կառուցվածքում 2007 թվականի առաջին եռամսյակում էական տեղաշարժեր չեն կանխատեսվում, ուստի սպասվում է, որ համախառն սպառումը, ինչպես նաև համախառն ներդրումները ավելանալու են մոտ 5%-ով:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության 2006 թվականի տարեկան արդյունքներով, ըստ ԿԲ գնահատումների, հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն, որը, ըստ հարկաբյուջետային ազդակի հաշվարկված ցուցանիշի, կազմում է 0.5 տոկոս: Ընդ որում, կարելի է ակնկալել եկամուտների զսպող ազդեցություն, իսկ ծախսերի՝ ընդլայնող:

Հարկաբյուջետային հատվածի ցուցանիշների և 2007 թվականի առաջին եռամսյակի ՀՆԱ նախնական կանխատեսումները ցույց են տալիս, որ 2007 թվականի առաջին եռամսյակի հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա փոքր-ինչ զսպող ազդեցություն:

Գնաճի կանխատեսումներ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Արտաքին հատվածին առնչվող հիմնական ենթադրությունները, որ կիրառվել են գնաճի կանխատեսումներում, վերաբերում են հումքային ապրանքների միջազգային գներին: Հիմնականը շաքարավազի գների վրա ազդող շաքարի միջազգային գների էական աճն է: Նավթի միջազգային գների աճի ռիսկը, որը գնահատվել էր նախորդ եռամսյակում, դարձել

է ավելի հավանական, այդ իսկ պատճառով ընթացիկ տարվա արդյունքներով կանխատեսվում է նավթի գների փոքր-ինչ աճ: Ռուսաստանում գների աճի ռիսկը, կապված հացահատիկի միջազգային գների հետ, ամբողջությամբ չեզոքացել է՝ բնակլիմայական պայմանների նորմալացմամբ պայմանավորված, և պահպանվում են բերքի աճի և գների որոշ չափով նվազման սպասումները: Ընդհանուր առմամբ, բացառությամբ վերջին գործոնի, արտաքին հատվածի ազդակները գների աճի ուղղությամբ են:

ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ներքին տնտեսությանն առնչվող հիմնական ենթադրությունները հետևյալն են.

- Կպահպանվի 2006 թվականի ընթացքում երկնիշ տնտեսական աճի արձանագրման հնարավորությունը: Չնայած տարվա արդյունքում որոշակիորեն նվազելու են արդյունաբերության իրական աճի տեմպերը, սակայն դա տնտեսական աճի վրա էական ազդեցություն չի ունենա, քանի որ միաժամանակ ավելանալու են ծառայությունների իրական աճի տեմպերը: Տնտեսական աճի ակնկալվող բարձր մակարդակի մասին են վկայում նաև տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները՝ ըստ ԿԲ բաղադրյալ ինդեքսների (գործարար միջավայրի, տնտեսական ակտիվության, սպառողների վստահության ինդեքսներ):
- Աշխատուժի շուկայում ընդհանուր միտումները կզարգանան ավելի դանդաղ տեմպերով:
- Հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնաճի վրա կլինի փոքր-ինչ ընդլայնողական:
- Դրամավարկային հատվածի զարգացումները ընդլայնողական ուղղությամբ են՝ տնտեսության մյուս հատվածների զարգացումների ներքո, սակայն գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար ԿԲ կողմից իրականացվող զսպողական քաղաքականությունը կհանգեցնի փողի ագրեգատների՝ կանխատեսվածից ավելի քիչ աճի:

Այսպիսով, արտաքին և ներքին միջավայրերի ազդակները, մասնավորապես՝ երկնիշ տնտեսական աճը և տարվա ընթացքում համաշխարհային շուկայում և տարածաշրջանում էներգակիրների բարձրացող գները շարունակում են գնաճային ճնշումներ առաջացնել: Այս ենթատեքստում կանխատեսվել է 3-4% գնաճ ինչպես մինչև 2006 թվականի ավարտը՝ 2005 թվականի դեկտեմբերի համեմատ, այնպես էլ 2006 թվականի մարտից 2007 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

(03.02.2006)

Առաջին եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2006 թվականի փետրվարի 3-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց 2005 թվականի ընթացքում տնտեսական իրավիճակի վերլուծության և 2006 թվականի կանխատեսումների ներկայացումը:

Ինչպես 2005 թվականի ցուցանիշները, այնպես էլ 2006 թվականի կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագայի հավանական ռիսկերը:

Ըստ Կենտրոնական բանկի կանխատեսումների՝ շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման պայմաններում 2006 թվականի դեկտեմբերին, 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, գնաճը կկազմի 3-4%: Կանխատեսումների ենթատեքստում գնահատվել է տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը ինչպես 2005 թվականի գնաճի, այնպես էլ 2006 թվականի գնաճի կանխատեսված ցուցանիշների վրա:

2005 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005 թվականի դեկտեմբերին, 2004 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, գրանցվել է 0.2% գնանկում՝ հիմնականում պայմանավորված սպառողական զամբյուղում պարենային ապրանքների (տեսակարար կշիռը՝ գրեթե 66%) գների նվազմամբ, մինչդեռ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ինդեքսն ավելացել է համապատասխանաբար 2.1%-ով և 1.9%-ով:

Գնանկումը պայմանավորող հիմնական գործոնը գյուղատնտեսական մթերքների և ներմուծված ապրանքների գների նվազումն է: Իրական աշխատավարձի առաջանցիկ աճն արտադրողականության համեմատությամբ էական ազդեցություն չի ունեցել գնաճի ընդլայնման ուղղությամբ՝ պայմանավորված տնտեսության հիմնական ճյուղերում արտադրանքի ինքնարժեքում աշխատավարձի ցածր տեսակարար կշռով: Տնտեսության հարկաբյուջետային հատվածը տարվա կտրվածքով ընդհանուր առմամբ չեզոք ազդեցություն է ունեցել գնաճի վրա (տարվա երկրորդ կեսի ընդլայնողական վարքագծի ազդեցությունը կդրսևորվի 2006 թվականի առաջին կիսամյակում), իսկ դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակների զգալիորեն բարձր աճը որոշ չափով մեղմել է 2005 թվականի գնանկումը (լագային ընդլայնողական ազդեցություն կարձանագրվի 2006 թվականի առաջին կիսամյակում):

2006 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Իրական հատված. Կանխատեսվել է ՀՆԱ-ի ավելի քան 10% իրական աճ, որի կառուցվածքում 2006 թվականին կպահպանվեն արդյունաբերության և ծառայության ոլորտների՝ նախորդ տարիների աճի տեմպերը, իսկ շինարարության աճի տեմպերը նախորդ տարիներին արձանագրված բավականին բարձր աճի տեմպերից հետո դանդաղ կնվազեն: Գյուղատնտեսության ոլորտի աճի տեմպն ավելի համեստ կլինի (3.5%)՝ նախորդ տարիների բարձր աճի (2004-05 թթ.՝ միջինը 12.8%) տեմպերի համեմատ, որն ընդլայնողական ազդեցություն կթողնի գների մակարդակի վրա:

Շինարարության և արդյունաբերության ոլորտների աճը վերջին տարիներին ուղեկցվել է գործազրկության նվազմամբ և արտադրողականության աճով: Նշված երկու գործոնները նախապայման են 2006 թվականի իրական աշխատավարձի աճի: Սա նույնպես ընդլայնողական ազդեցություն կարող է թողնել գների մակարդակի ձևավորման վրա, եթե ավելի արագ տեմպերով չաճի արտադրողականությունը:

Բնական գազի սակագները. Գների վրա ընդլայնողական ազդեցություն կարող է թողնել նաև բնական գազի սակագների սպասվող աճը: Ընդ որում, ազդեցությունը լինելու է ինչպես ուղղակի՝ սպառողական զամբյուղի վրա, այնպես էլ անուղղակի՝ արտադրության ծախքերի ավելացման միջոցով: Գնաճի կանխատեսման մեջ ներառված է սակագների ուղղակի աճի ազդեցությունը սպառողական զամբյուղում դրա տեսակարար կշռի չափով, սակայն անուղղակի ազդեցությունը դեռևս հնարավոր չէ գնահատել: Անուղղակի ազդեցություն կլինի ինչպես էլեկտրաէներգիայի սակագների հետագայում ակնկալվող աճի միջոցով, այնպես էլ բնական գազ սպառող ձեռնարկությունների կողմից թողարկվող ապրանքատեսակների ինքնարժեքի ավելացման արդյունքում դրանց գների աճի միջոցով՝ որոշակի լագով:

Արտաքին հատված. Նախորդ տարվա համեմատությամբ կանխատեսվում է մասնավոր հատվածի տրանսֆերտների աճի տեմպերի դանդաղում, ինչպես նաև ընթացիկ հաշվի պակասուրդի խորացում, որի պայմաններում ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ կարժևորվի ավելի դանդաղ տեմպերով, ինչն էլ կպայմանավորի սպառողական զամբյուղում ներմուծվող ապրանքատեսակների գների վրա դեֆլյացիոն ճնշումների բացակայությունը:

Փող և վարկ. 2005 թվականի ընթացքում գնանկումը կրել է առավելապես ոչ մոնետար գործոնների ազդեցությունը, և քանի որ տնտեսությունում առկա էր փողի նկատմամբ գնաճային ճնշումներ չառաջացնող պահանջարկի աճ՝ պայմանավորված դրամայնացման աճով, երկրորդ կիսամյակում՝ բյուջեի ընդլայնողական վարքագծով և այլ գործոններով, Կենտրոնական բանկը բավականին բարձր տեմպերով ավելացրել է փողի առաջարկը: Սա մի կողմից պարզապես չեզոքացրել է ավելի մեծ գնանկման դրսևորումները, մյուս կողմից՝ կուտակել գնաճային մեծ ներուժ, որը դրսևորվի 2006 թվականին: Ընդ որում, 2005 թվականի երկրորդ կիսամյակի փաստացի և 2006 թվականի համար ծրագրված հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես ընդլայնողական ազդեցություն է ունենալու 2006 թվականի գնաճի վրա:

Շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման պայմաններում կանխատեսվում է դրամային և փողի ագրեգատների էական աճ՝ պայմանավորված տնտեսության վարկավորման և կանխիկի՝ նախորդ տարվա աճի տեմպերի պահպանմամբ: Փողի ագրեգատների աճը ձևավորվել է տնտեսության այլ հատվածների զարգացումների պայմաններում և ընդլայնող ազդեցություն կունենա գնաճի վրա:

Ամփոփում. 2006 թվականին կշարունակվի երկնիշ տնտեսական աճը, որը, համակցվելով տարվա ընթացքում համաշխարհային շուկայում և տարածաշրջանում էներգակիրների բարձր գների հետ, կարող է առաջացնել գնաճային ճնշումներ՝ իրական նախապայմաններ ստեղծելով գնաճի 3% ցուցանիշի գերազանցման ուղղությամբ: Միաժամանակ, առաջադրվում են որոշ ռիսկեր, որոնք կարող են ավելի ընդլայնողական ազդեցություն ունենալ գնաճի ցուցանիշի վրա:


- Եվրոպական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկումը ներմուծվող եվրոպական ապրանքների դոլարային գների թանկացման միջոցով կարող է առաջացնել գնաճային ճնշումներ: Աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում հնարավոր է նաև նավթամթերքի գների աճ: Ներմուծվող ապրանքների, և մասնավորապես՝ վառելիքի գների սպասվածից բարձր աճի պարագայում առկա կլինեն գնաճի նպատակային ցուցանիշից գերազանցման ռիսկեր:
- 2005 թվականին փողի ագրեգատների մեծածավալ աճի լագային ազդեցությունը 2006 թվականի գնաճի ցուցանիշի վրա կարող է ունենալ կանխատեսվածից ավելի ընդլայնողական ազդեցություն:

Բնակլիմայական պայմանները սպասվածից ավելի բարենպաստ լինելու դեպքում առկա է նաև գնաճի նվազման ռիսկ: Գյուղատնտեսության ոլորտի աճը կլինի կանխատեսվածից շատ ավելի բարձր, որը, սկսած 2-րդ եռամսյակից, զսպողական ազդեցություն կունենա սպառողական զամբյուղում պարենային ապրանքների գների վրա:

Միաժամանակ, բնականոն գնաճի սպասումները շարունակում են մնալ ցածր, և ԿԲ խորհուրդը համաձայնվեց, որ գնաճային ճնշումների տարեկան 3% ցուցանիշի գերազանցման ռիսկերը կարող են չեզոքացվել աստիճանաբար:

Այս պարագայում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշեց բարձրացնել ԿԲ ռեպո համաձայնագրերի (վերաֆինանսավորման) տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ հասցնելով 4%-ի, ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ համապատասխանաբար 1% և 16%: Միաժամանակ տնտեսության զարգացման հեռանկարների փոփոխության դեպքում խորհուրդը կանդրադառնա տոկոսադրույքներին՝ գնաճի տարեկան 3% ցուցանիշի ապահովման համար:

ՍԳԻ-ի տարեկան տոկոսային փոփոխությունը



Տարբեր միջակայքերում գնաճի ցուցանիշի գտնվելու հավանականությունները
(2006 թ. դեկտեմբերը 2005 թ. դեկտեմբերի նկատմամբ)

Միջակայք	մինչև 1%	1%-2%	2%-3%	3%-4%	4%-5%	5%-ից ավելի
Հավանականություն	< 1	4	23	42	25	5

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(28.02.2006)

2006 թվականի մարտ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2006 թվականի փետրվարի 28-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց 2006 թվականի հունվարին ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի ներկայացումը՝ ներառյալ գնաճը, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագայի հավանական ռիսկերը:

Արտաքին հատված. Արտաքին միջավայրը զարգանում է ակնկալվող սցենարի շրջանակում. նույնությամբ պահպանվել են 2006 թվականի փետրվարի 3-ի ԿԲ մամլո հաղորդագրության մեջ նշված գնաճի նպատակային ցուցանիշի գերազանցման ռիսկերը: Դրանք են՝ եվրոպական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկման և նավթամթերքի գների հնարավոր աճի ռիսկերը:

Միաժամանակ, պայմանավորված ներմուծվող հացամթերքի գներով, առկա են որոշակի նախազգուշական ազդակներ: Ըստ տեղեկատվության՝ Ռուսաստանում անբարենպաստ բնակլիմայական պայմանների պատճառով սպասվում է հացահատիկային կուլտուրաների բերքի որոշակի նվազում: Քանի որ նվազման չափերը դեռևս ճշգրտված չեն, ենթադրվում է, որ դա հիմնականում կանդրադառնա ոչ թե ցորենի, այլ մյուս հացահատիկային մշակաբույսերի գնի վրա: Այս առումով գնաճի նպատակային ցուցանիշի էական գերազանցման ռիսկեր չկան:

Ապրանքների ու ծառայությունների արտահանման ու ներմուծման ցուցանիշներն ընդհանուր առմամբ համահունչ են կանխատեսված սցենարին: Հունվարին գրանցվել է ադամանդի ներմուծման կրճատում, որին համապատասխան նվազել է նաև ներմուծման աճի տեմպը: Սակայն սա կրում է ժամանակավոր բնույթ. հավանական է եռամսյակի մյուս ամիսներին ադամանդի ներմուծման ծավալների կանխատեսված ցուցանիշի վերականգնում:

Մասնավոր հատվածի տրանսֆերտների աճի տեմպը հունվարին բարձր էր կանխատեսված մակարդակից (հունվարին, 2005 թ. հունվարի համեմատությամբ, աճը կազմել է 43.6%՝ առաջին եռամսյակի կանխատեսված 29.1%-ի պարագայում), ինչը եռամսյակային և տարեկան կանխատեսումների համեմատությամբ ռիսկային է. դա թերևս կավելացնի դրամի արժևորման ճնշումները: Վերջինս, այլ հավասար պայմաններում, կպայմանավորի սպառողական զամբյուղում ներմուծվող ապրանքատեսակների գների վրա գնանկումային ճնշումների առաջացումը:

Իրական հատված. Տնտեսության իրական հատվածում հունվարին արձանագրվել է 7.4% իրական աճ, որը կանխատեսումների շրջանակում է: Արդյունաբերության ոլորտում արձանագրված իրական նվազումը հիմնականում պայմանավորվել է հունվարին գազամուղի խափանմամբ: Արձանագրված անկումը, ըստ ՀՀ ԿԲ կանխատեսման, 2006 թվականի առաջին եռամսյակին հաջորդող ամիսներին կվերականգնվի: Գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ոլորտներում գրանցված իրական աճի ցուցանիշները համահունչ են կանխատեսվածին:

Ընդհանուր առմամբ, թեև ճյուղային ոլորտների միտումները սպասվածից որոշակի շեղվել են, այնուամենայնիվ տնտեսական աճի առաջին եռամսյակի կանխատեսված ցուցանիշը իրատեսական է:

Հարկաբյուջետային հատված. 2006 թվականի առաջին եռամսյակի համար հաշվարկված հարկաբյուջետային ազդակների հիմքում ընկած ցուցանիշների համաձայն՝ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի աճը 2005 թվականի առաջին եռամսյակի համեմատությամբ կազմում է համապատասխանաբար 3.3% և 22.7%:

Հունվարին, ըստ փաստացի նախնական տվյալների, 2005 թվականի նույն ամսվա համեմատությամբ գրանցվել է եկամուտների 2.6%-ով նվազում, ինչը կանխատեսումների շրջանակում է (2005 թվականի հունվարին արձանագրվել էր ոչ հարկային եկամուտների մեծ աճ), և ծախսերի 40.0% աճ: Ընդհանուր առմամբ, հունվարին արձանագրված պետական բյուջեի փաստացի ցուցանիշների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից փետրվար, մարտ ամիսների պետբյուջեի ծրագրերի կատարման պայմաններում առկա են իրական ռիսկեր. 2006 թվականի առաջին եռամսյակում, 2005

թվականի առաջին եռամսյակի համեմատ, ծախսերը կավելանան, իսկ եկամուտների աճը կպահպանվի, և արդյունքում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը կլինի կանխատեսվածից առավել ընդլայնողական:

Փող և վարկ. Տնտեսության դրամավարկային հատվածի զարգացումները հունվարին համահունչ էին եռամսյակային կանխատեսումներին: Ինչպես ակնկալվում էր՝ դրամային զանգվածի աճը գերազանցել է փողի զանգվածի աճը՝ կազմելով 59% (փողի զանգվածի աճը՝ 31.8%): Ընդ որում, տնտեսության վարկավորումն ավելացել է 40.6%-ով: Արծանագրվել է նաև դրամային ավանդների առաջանցիկ աճ (58%)՝ արտարժութային ավանդների աճի (5.8%) համեմատությամբ՝ վկայելով տնտեսության դրամայնացման շարունակական ավելացման մասին:

Խորհուրդն արծանագրել է, որ 2006 թվականի հունվարի զարգացումները ընդհանուր առմամբ համահունչ են առաջին եռամսյակի և տարեկան կանխատեսումներին: Երկնիշ տնտեսական աճի կանխատեսումն իրատեսական է: Միաժամանակ, գնաճի նախանշված ցուցանիշը առկա զարգացումների պայմաններում դառնում է առավել իրատեսական, ինչը նշանակում է, որ պահպանվում են գնաճի նպատակային ցուցանիշի գերազանցման ռիսկերը: ԿԲ խորհրդի գնահատմամբ՝ 2006 թվականի հունվարին գրանցված 3.6% գնաճը, զուգորդվելով տարվա ընթացքում համաշխարհային շուկայում և տարածաշրջանում էներգակիրների բարձր գների հետ, կստեղծի գնաճային ճնշումներ: Հիմնականում բյուջեի առավել ընդլայնողական վարքագծի պայմաններում ԿԲ-ն ֆինանսական շուկայում առավել ակտիվ գործողությունների միջոցով կշարունակի չեզոքացնել գնաճային ճնշումները:

ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ ռեպո (վերաֆինանսավորման) տոկոսադրույքը՝ 4%, ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 1% և 16%՝ միաժամանակ առավել ակտիվացնելով ներքաշող գործառնությունները:

Մարտի ընթացքում տնտեսության զարգացման հեռանկարների փոփոխության դեպքում ԿԲ խորհուրդը կանդրադառնա տոկոսադրույքներին՝ գնաճի տարեկան 3% նպատակային ցուցանիշի ապահովման համար:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(31.03.2006)

2006 թվականի երկրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2006 թվականի մարտի 31-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2006 թվականի երկրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց առաջին եռամսյակի տնտեսական իրավիճակի և փաստացի գնաճի վերլուծության և 2006 թվականի ապրիլից 2007 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագայի հավանական ռիսկերը:

Ըստ ԿԲ կանխատեսումների՝ շուկայի սպասումների ազդեցությունը ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման պարագայում 2006 թվականի մարտին հաջորդող 12 ամիսներին գնաճը կկազմի 3 - 4%: Կանխատեսումների ենթատեքստում գնահատվել է գնաճի ցուցանիշի վրա տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը:

2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՅԱԿ

2006 թվականի մարտին 12-ամսյա գնաճը կազմել է 0.3%՝ կանխատեսված 0.4%-ի փոխարեն: Գնաճը ձևավորվել է պարենային ապրանքների գների 0.8% գնանկման, ոչ պարենային ապրանքների՝ 2.6% և ծառայությունների 2.9% գնաճի ազդեցությամբ: 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ մարտին գնաճը կազմել է 4.2%՝ կանխատեսված 4.4%-ի փոխարեն: Ինչպես գնաճի, այնպես էլ մակրոտնտեսական ցուցանիշները արձանագրվել են տարեսկզբին կանխատեսվածի շրջանակում: Արտաքին հատվածը զարգացել է ըստ կանխատեսվածի, իսկ տնտեսության ճյուղային զարգացումները թեև որոշ չափով շեղվել են կանխատեսվածից, այնուամենայնիվ տնտեսական աճը սպասվածի շրջանակում է եղել: Սրանք գնաճի վրա ազդեցության առումով լրացուցիչ ճնշումներ չեն ստեղծել: Իրական հատվածում շեղումները պայմանավորվել են հունվարին գազամուղի խափանմամբ, ինչի հետևանքով արդյունաբերության ոլորտում արձանագրվել է իրական աճի տեմպի նվազում, որի ազդեցությունը տնտեսական աճի վրա փոխհատուցվել է ծառայությունների ոլորտի՝ կանխատեսվածից արագ աճով:

Կանխատեսվել էր հարկաբյուջետային հատվածի ընդլայնողական ազդեցություն գնաճի վրա, որը թեև տեղի է ունեցել, սակայն ավելի թույլ: Տնտեսության իրական, արտաքին և հարկաբյուջետային հատվածների զարգացումների պարագայում դրամավարկային հատվածի ցուցանիշները նույնպես կանխատեսվածի շրջանակում են: Արձանագրվել են ՀՀ դրամ/արտարժույթ հարաբերակցության որոշակի կառուցվածքային տարբերություններ՝ պայմանավորված դրամայնացման գործընթացի տեմպերի նվազմամբ: Ավելի արագ են աճել արտարժութային, և ավելի դանդաղ՝ դրամային ավանդները, ինչի արդյունքում դոլարայնացման կրճատման ավելի դանդաղ տեմպեր են արձանագրվել: Ընդհանուր առմամբ, ԿԲ-ն բավարարել է տնտեսության փողի պահանջարկը՝ միաժամանակ հետևելով գնաճային ճնշումների չեզոքացմանը:

2006 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՅԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Արտաքին հատված. Արտաքին հատվածի ազդեցության առումով հիմնական փոփոխությունները վերաբերում են հումքային ապրանքների միջազգային գներին: Շաքարավազի գնի վրա ազդող՝ շաքարի միջազգային գնի էական աճ է արձանագրվել: Դիտարկելով շաքարի միջազգային գների ֆյուչերսային պայմանագրերը՝ ենթադրվում է, որ տարվա ընթացքում կարձանագրվի այդ ապրանքի գնի չնչին նվազման միտում: Ինչ վերաբերում է նավթի միջազգային գնին, ապա աճի ռիսկը, որը գնահատվել էր նախորդ եռամսյակում, դարձել է ավելի հավանական, և այդ պատճառով տարվա արդյունքներով կանխատեսվում է նավթի գնի փոքր-ինչ աճ: Պայմանավորված հացահատիկի միջազգային գներով, ինչպես նաև Ռուսաստանում բարենպաստ բնակլիմայական պայման-

ներով՝ գների աճի ռիսկը ամբողջությամբ չեզոքացել է, և պահպանվում են բերքի աճի և գների որոշ չափով նվազման սպասումները: Բացառությամբ վերջին գործոնի՝ արտաքին հատվածից եկող ազդակները, ընդհանուր առմամբ, գների աճի ուղղությամբ են:

Եվրո/ԱՄՆ դոլար փոխարժեքի կանխատեսումները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ էական փոփոխությունների չեն ենթարկվել:

Իրական հատված. Համաձայն վերանայված կանխատեսումների՝ տարվա արդյունքում որոշակիորեն կնվազեն արդյունաբերության ոլորտի իրական աճի տեմպերը, ինչը, սակայն, տնտեսական աճի վրա էական ազդեցություն չի ունենա, քանի որ միաժամանակ կավելանան ծառայությունների ոլորտի իրական աճի տեմպերը (ՀՀ անկախության 15-ամյակի կապակցությամբ): Կրկին կանխատեսվել է երկնիշ տնտեսական աճ:

Տնտեսական աճի ակնկալվող բարձր մակարդակի մասին են վկայում նաև տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները: Դա արտահայտվում է Կենտրոնական բանկի կողմից հաշվարկվող բաղադրյալ ինդեքսներում (գործարար միջավայրը, տնտեսական ակտիվությունը և սպառողների վստահությունն արտահայտող ինդեքսներ): Առաջին եռամսյակում կատարված հարցումների համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտներն ակնկալում են, որ երկրորդ եռամսյակից 7.8%-ով կբարելավվի տնտեսական ընդհանուր միջավայրը, իսկ տնտեսական ակտիվությունը կավելանա 31.5%-ով:

Ակնկալվում է, որ և՛ արտահանման, և՛ ներմուծման գները կունենան փոքր-ինչ ավելի բարձր աճի տեմպեր, քան կանխատեսված էր նախորդ եռամսյակում: Տնտեսական հիմնարար գործոնները՝ տրանսֆերտների չափավոր աճը, արտահանման՝ կանխատեսվածից ցածր մակարդակը, ներմուծման կանխատեսված մակարդակի արձանագրումը վկայում են դրամի արժեզրկման ճնշումների մասին, որոնք, ըստ ԿԲ գնահատումների, հետագայում կչեզոքանան՝ պայմանավորված կապիտալ ներհոսքի ակտիվացմամբ:

Աշխատուժի շուկա. Աշխատուժի շուկայում ընդհանուր միտումները կզարգանան կանխատեսվածի շրջանակում, սակայն ավելի դանդաղ տեմպերով: Փոքր-ինչ նվազման ուղղությամբ վերանայվել են միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպերը, իսկ պաշտոնական գործազրկության մակարդակը կնվազի ավելի դանդաղ տեմպերով:

Համախմբված բյուջե. Ըստ 2006 թվականի առաջին եռամսյակի նախնական գնահատումների հիման վրա վերանայված կանխատեսումների՝ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տարեկան կտրվածքով մնացել է անփոփոխ, սակայն փոխվել են եռամսյակներում ակնկալվող ազդեցությունները: Տարվա ընթացքում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնաճի վրա կլինի փոքր-ինչ ընդլայնողական:

Փող և վարկ. Պայմանավորված 2006 թվականի առաջին եռամսյակի զարգացումներով՝ դրամավարկային հատվածի նախորդ կանխատեսումները որոշակի փոփոխություններ են կրել: Կանխատեսվել է դրամային ավանդների աճի նվազում և արտարժութային ավանդների ավելի բարձր աճ, հետևաբար նաև դոլարայնացման նվազման տեմպերի կրճատում՝ պայմանավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի փաստացի վարքագծով: Դրամավարկային հատվածի զարգացումները 2006 թ. ապրիլից մինչև 2007 թ. առաջին եռամսյակի ավարտը, տնտեսության մյուս հատվածների զարգացումների պարագայում, կրկին ընդլայնողական ուղղությամբ են, սակայն Կենտրոնական բանկի զսպողական քաղաքականությունը գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար կհանգեցնի փողի ագրեգատների՝ կանխատեսվածից պակաս աճի:

Ամփոփում. 2006 թվականի մարտի 31-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում քննարկվել են գնաճի վրա տնտեսական հիմնարար գործոնների և շուկայի սպասումների ազդեցությունը: Խորհրդի գնահատմամբ՝ 2006 թ. ևս կարծանագրվի երկնիշ տնտեսական աճ, ինչը, զուգորդվելով համաշխարհային շուկայում և տարածաշրջանում էներգակիրների աճող գների հետ, կշարունակի ստեղծել գնաճային ճնշումներ: Շաքարի միջազգային գնի, ինչպես նաև որոշ մթերքների վերջերս գրանցված գների աճը նույնպես բնակչության շրջանում ձևավորում է պարենային ապրանքների գնաճային սպասումներ: Միաժամանակ, առաջադրվում են որոշակի ռիսկեր, որոնք կարող են ավելի ընդլայնողական կամ զսպողական ազդեցություն ունենալ գնաճի ցուցանիշի վրա:

•Շաքարի միջազգային գնով պայմանավորված՝ առկա է էական անորոշություն. հնարավոր է որոշ ժամանակ շարունակվի այդ ապրանքի գնի աճը:

•Միջազգային շուկայում պահպանվում է ԱՄՆ դոլարի դիրքերի հնարավոր թուլացման ռիսկը, որը կհանգեցնի այլ երկրներից ներմուծվող ապրանքների դոլարային գների թանկացման:

•Ըստ ԿԲ հարցումների՝ թերևս պայմանավորված բնական գազի սակագների սպասվող թանկացմամբ, առկա են գնաճային սպասումներ: Մասնավորապես՝ հարցվածների 69%-ը գտնում է, որ պարենա-

յին ապրանքների գները կթանկանան, 29%-ը սպասում է դրանց անփոփոխ մակարդակ, իսկ 2%-ն ակնկալում է պարենային ապրանքների գների նվազում: Ներկայումս, երբ բնական գազի սակագների թանկացումը մեղմվել է, հավանական է գնաճային սպասումների նվազում:


•Գյուղատնտեսության ոլորտում, բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում, սպասվածից ավելի բարձր աճ կարձանագրվի, որի դեպքում, սկսած 2-րդ եռամսյակից, գյուղատնտեսական ապրանքների գները զսպողական ազդեցություն կունենան սպառողական զամբյուղում պարենային ապրանքների գների վրա:

•Ռուսաստանի տնտեսության դրական զարգացումները կարող են հանգեցնել ոչ արտահանելի հատվածում ներգրավված մեր հայրենակիցների եկամուտների ավելացման, որն էլ կնպաստի Ռուսաստանից ստացվող տրանսֆերտների՝ կանխատեսվածից ավելի աճին: Սա կստեղծի դրամի արժևորման և ներմուծման գների նվազման ճնշումներ, հետևաբար նաև՝ գնանկումային ճնշումներ:

Կենտրոնական բանկի խորհուրդը հայտարարում է, որ գնաճային ճնշումների՝ տարեկան առավելագույնը 3% նպատակային ցուցանիշի գերազանցման ռիսկերը դեռևս առկա են, ինչը Կենտրոնական բանկը կչեզոքացնի աստիճանաբար՝ ֆինանսական շուկայում ավելի ակտիվ գործառնությունների իրականացման միջոցով: Այս պարագայում խորհուրդն անփոփոխ է թողել ապրիլ ամսվա ԿԲ ռեպո տոկոսադրույքը՝ 4%, և ավանդների տոկոսադրույքը՝ 1%, իսկ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը նվազեցրել է մինչև 8%:

Տնտեսության զարգացման հեռանկարների փոփոխության դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կանդրադառնա տոկոսադրույքներին՝ գնաճի տարեկան 3% նպատակային ցուցանիշի ապահովման համար:

ՍԳԻ-ի տարեկան տոկոսային փոփոխությունը



Տարբեր միջակայքերում գնաճի ցուցանիշի գտնվելու հավանականությունները
(2006 թ. IV եռամսյակի կանխատեսված գնաճը 3.4%)

Միջակայք	մինչև 2%	2%-3%	3%-4%	4%-5%	5%-6%	6%-ից ավելի
Հավանականություն	< 1	20	54	23	2	<1

2006 թվականի առաջին եռամսյակում ՀՀ բանկային համակարգի և վարկային կազմակերպությունների գործունեության վերլուծություն

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐ

31.03.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր: Առաջին եռամսյակի ընթացքում բանկերի մասնաճյուղերի քանակն ավելացել է չորսով և կազմել 271:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2006թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 4.7%-ով (4.5 մլրդ դրամով) և 31.03.2006թ. դրությամբ կազմել է 99.3 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 4.0 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ և մեկ բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի 250 մլն դրամ համալրմամբ:

Բանկային համակարգի ռիսկով կշռված ակտիվներն աճել են 0.8%-ով, իսկ նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները՝ համապատասխանաբար 1.3% և 0.5%-ով: Նշվածի արդյունքում ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը աճել է 0.2 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 0.1 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 33.8% և 31.6%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 0.2 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել է 21.3%՝ պայմանավորված կապիտալի աճի տեմպի նկատմամբ ակտիվների փոքր-ինչ առաջանցիկ աճի տեմպով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները աճել են 6.1%-ով (21.0 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 366.9 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 14 բանկերում և նվազում՝ 7 բանկերում:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն ավելացել են 1.4%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 8.4%-ով, որի արդյունքում ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել 31.8%:

Բանկային համակարգի պարտավորությունների աճին մեծապես նպաստել է իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների 15.4 մլրդ դրամով ավելացումը:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդների (ցպահանջ և ժամկետային միջոցների) աճը կազմել է 6.9% կամ 18.1 մլրդ դրամ. ընդհանուր ցպահանջ պարտավորություններն ավելացել են 12.4%-ով (18.0 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ 0.03%-ով (32.9 մլն դրամով):


Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցներ) արտարժութային միջոցները աճել են 11.0%-ով (19.4 մլրդ դրամով), իսկ դրամային միջոցները նվազել են 1.6%-ով (1.4 մլրդ դրամով):

Նշված զարգացումների արդյունքում 31.03.2006թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 279.4 մլրդ դրամ, որի 29.6%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբին՝ 32.2%): Հատկանշական է, որ չնայած հաշվետու եռամսյակում ֆիզիկական անձանց ՀՀ դրամով միջոցները (և՛ ցպահանջ, և՛ ժամկետային) ավելացել են, իսկ իրավաբանա-

կան անձանց դրամային միջոցները (և՛ ցպահանջ, և՛ ժամկետային)՝ նվազել, այնուամենայնիվ ֆիզիկական անձանց խնայողություններում արտարժութային միջոցներն ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, քան իրավաբանական անձանց խնայողություններում: Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում ՀՀ դրամով տեղաբաշխած միջոցների կշիռը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է ընդամենը 15.8%, որը զիջում է իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամով պարտավորությունների 41.3% տեսակարար կշռին: Նախորդ եռամսյակում նշված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 15.8% և 46.0%:

Պարտավորությունների կազմում եռամսյակի ընթացում փոփոխություններ են արձանագրվել նաև բանկերի լորո թղթակցային հաշիվներում՝ դրանք նվազել են 14.8%-ով (735 մլն դրամով), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններում՝ ավելացել են 26.1%-ով (2.1 մլրդ դրամով), այլ պարտավորություններում՝ նվազել 4.6%-ով (1.1 մլրդ դրամով):

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորությունների կազմում նկատելի փոփոխվել են իրավաբանական անձանց պարտավորությունների տեսակարար կշիռները. իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների տեսակարար կշիռը աճել է 2.6 տոկոսային կետով, ինչին զուգահեռ, 2.5 տոկոսային կետով նվազել է դրանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2006թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 5.8%-ով (25.5 մլրդ դրամով) և 31.03.06թ. դրությամբ կազմել 466.2 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 16 բանկերում, իսկ նվազում՝ 5 բանկերում:

Բանկային համակարգի ակտիվների կազմում զգալի ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 6.3%-ով (11.6 մլրդ դրամով), պետական արժեթղթերը՝ 15.9%-ով (10.4 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ պահանջները՝ 28.6%-ով (4.6 մլրդ դրամով) և ԿԲ-ում թղթակցային հաշիվները՝ 7.6%-ով (3.3 մլրդ դրամով):


Նվազել են ՀՀ ԿԲ նկատմամբ այլ պահանջները՝ 82.5%-ով (6.4 մլրդ դրամով) և բանկերի նոստրո թղթակցային հաշիվները՝ 3.6%-ով (1.9 մլրդ դրամով):

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսությանը տրված վարկերի աճը գերազանցապես պայմանավորվել է ռեզիդենտների վարկավորման աճով:

Տնտեսությանը տրամադրված վարկերի կազմում ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 10.5%-ով (7.8 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 4.5%-ով (4.7 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են 13.8%-ով (830 մլն դրամով): 31.03.06թ. դրությամբ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալը կազմել է 81.6 մլրդ

դրամ, իրավաբանական անձանց վարկերինը՝ 108.9 մլրդ դրամ և բանկի հետ կապված անձանց վարկերինը՝ 5.2 մլրդ դրամ:


Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Հաշվետու եռամսյակում վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 7.8%-ով (16.2 մլրդ դրամով) և կազմել 224.4 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն աճել են 5.2.%-ով և կազմել 79.4 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 9.3%-ով և կազմել 144.9 մլրդ դրամ, ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել 35.4%:

Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի (31.03.06 թ. դրությամբ)



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,
5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված,
8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 16.6%-ով (3.3 մլրդ դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 6.9%-ով (13.0 մլրդ դրամով):

Ռեզիդենտների վարկային ներդրումներում դրամով տրամադրված վարկերը ավելացել են 5.4%-ով, իսկ արտարժույթով տրամադրված վարկերը՝ 7.8%-ով: Տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Հաշվետու եռամսյակում վարկերի աճը դարձյալ հիմնականում ապահովել են սպառողական վարկերը՝ աճել են 8.5%-ով (4.3 մլրդ դրամով), հիփոթեքային վարկերը աճել են 19.4%-ով (2.2 մլրդ դրամով), առևտրի վարկերը՝ 4.4%-ով (1.9 մլրդ դրամով):

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի դասակարգված ակտիվների տեսակարար կշիռը ավելացել է 0.9 տոկոսային կետով և կազմել ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 2.5%-ը: 31.03.2006թ. դրությամբ վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են 97.5%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.8%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.2%:

Բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 46.7%:

Բանկային համակարգի $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը եռամսյակի ընթացքում աճել է 0.5 տոկոսային կետով, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը նվազել է 0.2 տոկոսային կետով և 31.03.2006թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար՝ 44.7% և 110.3%: Իրացվելիության ցուցանիշները շարունակում են զգալի բարձր մնալ $Ն2^1$ նորմատիվի 20% և $Ն2^2$ նորմատիվի 80% սահմանաչափերից:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2006թ. առաջին երեք ամիսների ընթացքում բանկային համակարգն ապահովել է 4.0 մլրդ դրամ զուտ շահույթ, ինչը գերազանցել է 2005 թվականի նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը 52.3%-ով: Եռամսյակի ընթացքում շահույթով են աշխատել 20 բանկեր, որոնց ստացած զուտ շահույթը կազմել է 4.1 մլրդ դրամ, իսկ վնասով աշխատած 1 բանկի վնասը կազմել է 27 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում բանկային համակարգը ստացել է 19.1 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 14.2 մլրդ դրամի ծախսեր: Արդյունքում՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 4.9 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 50.4%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 21.6% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 28.0%: Տոկոսային եկամուտների 80.2%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտներում ստացված միջնորդավճարները կազմել են 54.2%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 28.7%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 43.9%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 20.5% և 35.6% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 43.4%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 56.8% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2006թ. առաջին եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպության լիցենզիա են ստացել «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն և «Նոր Հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն: 31.03.06թ. դրությամբ ՀՀ տարածքում վարկային կազմակերպության լիցենզիա են ունեցել 13 ընկերություններ, որոնց մասնաճյուղերի քանակը կազմել է երկու:

2006թ. առաջին եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը աճել է 5.0%-ով և կազմել 8.3 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի 1.8%-ն[1] է:

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը երեք ամիսների ընթացքում ավելացել է 1.7%-ով (83 մլն դրամով): Իրավաբանական անձանց վարկերը նվազել են 4.3%-ով և կազմել 1.9 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 5.1%-ով և կազմել 2.9 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը եռամսյակի ընթացքում ավելացել է 23.1%-ով և կազմել 1.7 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 2.8%-ով (197 մլն դրամով) և կազմել 7.4 մլրդ դրամ: Վար-

[1] 01.03.2006 թ. դրությամբ ներառված են 10 վարկային կազմակերպությունների ամփոփ տվյալները, քանի որ 2006 թ. I եռամսյակում լիցենզիա ստացած վարկային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

կային կազմակերպությունների տրամադրած վարկային ներդրումների խոշոր աճ է արձանագրվել տրանսպորտի և կապի ճյուղում՝ 140.4%-ով (224 մլն դրամով) և սպառողական վարկերում՝ 12.6%-ով (194 մլն դրամով): Վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել արդյունաբերության ոլորտի վարկավորմանը՝ 27.5%, ընդ որում՝ միայն սննդի արդյունաբերությանը բաժին է ընկել վարկային ներդրումների 16.5%-ը: Սպառողական վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 23.6%, հիփոթեքային վարկերինը՝ 9.7%, ֆինանսական հատվածինը՝ 10.8%, գյուղատնտեսության վարկերինը՝ 6.9%, տրանսպորտի և կապի ճյուղինը՝ 5.2%, առևտրի ճյուղինը՝ 5.1%, իսկ այլ ճյուղերինը՝ 11.2%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ավելացել է 1.7 տոկոսային կետով և կազմել 91.6%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 5.1%-ով (225 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 4.6 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 4.9%-ով (171 մլն դրամով), ընդ որում՝ գրեթե հավասարաչափ աճել են ֆիզիկական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունները, իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունները և բանկերի ու այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները:

2005թ. առաջին երեք ամիսների ընթացքում 8 վարկային կազմակերպություններ աշխատել են շահույթով (ընդհանուր շահույթը կազմել է 154 մլն դրամ) և 2 վարկային կազմակերպություններ՝ վնասով (ընդհանուր վնասը կազմել է 75 մլն դրամ):

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2006 թվականի առաջին եռամսյակի վերջին


ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները արտաքին աշխարհի նկատմամբ 2006 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 47.9 մլն դոլար՝ նախորդ տարվա վերջի 47.7 մլն դոլարի փոխարեն: 2006 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 7.7 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 7.6 մլն դոլար հիմնական գումարի մարումներ:*

Փոփոխվել են վարկատու երկրների տեսակարար կշիռները ամբողջի մեջ: Մասնավորապես՝ ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Մեծ Բրիտանիան, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 15.8% (նախորդ եռամսյակում՝ 16.9 %), Ռուսաստանը՝ 14.6 % (նախորդ եռամսյակում՝ 14.7 %), Շվեյցարիան՝ 10.4 % (նախորդ եռամսյակում՝10.5 %), ԱՄՆ-ն՝ 10.9 % (նախորդ եռամսյակում՝ 10.3 %) և Լյուքսեմբուրգը՝9.4 % (նախորդ եռամսյակում՝ 9.4 %):

Ներգրավված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում. 14.8 մլն դոլարը՝ արդյունաբերության, 14.7 մլն դոլարը՝ առևտրի և 6.8 մլն դոլարը՝ ֆինանսական հատվածներում:

2006 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի (2005 թվականի վերջին՝ 7.6 %) համեմատ աճել է և կազմել 7.7 %, որոնց մոտ 48.2 %-ը լողացող (LIBOR, EURIBOR) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 4.1 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 23.1 %-ը՝ նախորդ տարվա վերջի 21.1 %-ի փոխարեն:

1999-2006թթ. ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը ունեցել է հետևյալ դինամիկան



** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռամսյակի ընթացքում փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ հետևյալ նորմատիվ ակտերում.

- «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ («Ա», «Բ» և «Գ») ստացած կազմակերպությունների արժեթղթերը, այդ կազմակերպությունների նկատմամբ այլ պահանջները, ինչպես նաև այդ կազմակերպությունների երաշխավորությամբ պահանջները բանկերի կապիտալի համարժեքության հաշվարկում կընդգրկվեն 20% ռիսկի կշռով՝ «Ա» և «Բ» վարկանիշների դեպքում և 50% ռիսկի կշռով՝ «Գ» վարկանիշի դեպքում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա», «Բ» և «Գ» վարկանիշ ստացած կազմակերպությունների արժեթղթերը, որոնք օգտագործվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնություններում, ներառվելու են նաև բանկի բարձր իրացվելի ակտիվներում: Վերոնշյալ փոփոխությունները, նպաստելով ձեռնարկությունների թափանցիկության մակարդակի և հուսալիության բարձրացմանը, կխթանեն բանկերի և իրական հատվածի համագործակցությունը:
- «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրվում է իրենց անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր, որոնց առնվազն 30%-ը պետք է ապահովված լինի առաջնակարգ (AAA (Aaa1)-ից A-(A3)) վարկանիշ ունեցող կազմակերպությունների կողմից: Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի առաջնակարգ ապահովվածության պահանջը անհրաժեշտ է ներդրողների շահերի պաշտպանության և արժեթղթերի շուկայի ցածր զարգացածության պայմաններում այդ տիպի արժեթղթերի նկատմամբ վերահսկողության ձևավորման նպատակով:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2006թ. առաջին եռամսյակի ընթացքում

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի 2006թ. դրամավարկային ծրագրով սահմանված ՀՀ վճարահաշվարկային համակարգերի զարգացման ուղղությունների՝ հաշվետու եռամսյակում հիմնականում ուշադրության կենտրոնում են եղել վճարային համակարգերի կարգավորման և հսկողության հետ կապված հարցերը: Մասնավորապես՝ հստակեցվել են արտասահմանյան վճարային համակարգերին անդամակցությանը ներկայացվող ֆինանսական, իրավական և այլ պահանջները, ինչը կնվազեցնի առևտրային բանկերի հնարավոր ռիսկերը միջազգային համակարգերին անդամակցելու և գործունեություն ծավալելու հարցում: Ուժի մեջ են մտել «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարված համապատասխան փոփոխությունները, որով հստակ սահմանվել են դրամական միջոցների փոխանցում իրականացնող կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև բորսայական առևտուր իրականացնող կազմակերպությունների հաշվարկների իրականացման պատասխանատվությունը:

Կարևորելով ՀՀ տարածքում քարտային բնագավառում ձեռք բերված նվաճումները և զարգացման միտումները՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտերի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտերով գործառնությունների իրականացման կարգը», որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտերի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտերով գործառնությունների իրականացման կանոնները:

ՀՀ կենտրոնական բանկը, միասնական վերահսկողության իրականացման հետ կապված, համապատասխան փոփոխություններ է կատարել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կարգում»՝ սահմանելով արժեթղթերի շուկայի մասնակիցներին, հաշվետու թողարկողներին, ապահովագրական գործունեություն իրականացնողներին տրամադրվող կոդերի կարգը:

Հաշվետու ժամանակահատվածում, հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, Կենտրոնական բանկի կողմից ՀՀ տարածքում գործող մի շարք բանկերի տրամադրվել են WESTERN UNION միջազգային վճարային համակարգին անդամակցելու թույլտվություններ, ինչպես նաև լիցենզավորվել է «Արմենիան էքսպրես» ՓԲԸ-ն՝ որպես դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություն:

ՀՀ կենտրոնական բանկի ռազմավարական նպատակներից մեկն է ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների խթանումը և զարգացումը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 1401 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 503616), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 979 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 225452:

Անկանխիկ վճարումների ծավալը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.49 անգամ (463 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.29 անգամ (112339-ով):


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումները 2005թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են՝ ծավալը 1.6 անգամ (378 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.37 անգամ, որը կազմել է 61662:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 15.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 3523: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրամական փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 5905 մլն ՀՀ դրամով (քանակը՝ 963-ով):

2006թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 21.44%-ը և

քանակի 45.78%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24.39%-ով (68 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը աճել է 34.65%-ով (26563 -ով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 23999 մլն ՀՀ դրամի 579356 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 1991 մլն ՀՀ դրամ: Քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը 2005թ. առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 1.97 անգամ (981 մլն ՀՀ դրամով), իսկ գործառնությունների քանակը աճել է 1.4 անգամ (11020 գործառնությունով): Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 156674 քարտ, որը 2005թ. տարեվերջի համեմատությամբ ավելացել է 1.14 անգամ (19488 քարտով):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2006թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 182, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 110 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա):


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 87.35%-ը և քանակի 95.68%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 99%-ով (426 մլրդ ՀՀ դրամով) իսկ քանակը՝ 36.4%-ով (57580-ով): Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս վճարումների ծավալային կառուցվածքում կազմել են մոտ 88.39%, իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 99.20%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 900-ով և կազմել 3370, իսկ ծավալը՝ 6655 մլն ՀՀ դրամով և կազմել 13368 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է մոտ 1.2 մլն ՀՀ դրամով և կազմել է 3.9 մլն ՀՀ դրամ:

